

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртутян» (образование) еженедельник 15.12.2021թ. չորեքշաբթի թիվ 51 (1024)

Ը ն դ առ ա ջ

Ստածե՞լ ես, սիրելի՛ ընթերցող, երբեւէ, թե ի՞նչ հրաշալի բան է **ընդառաջը**... Որեւէ երեւույթին, քեզ մոտեցող որեւէ մեկին **ընդառաջելը** սատարելու, աջակցելու իմաստներով... Ու նաեւ որեւէ իրադարձության նախօրյակին որեւէ բան նախատեսելը, նախաձեռնելը, հույս փայփայելը, որ գործող հաջողությամբ կպսակվի այսինչ կամ այնինչ երեւույթի գալստյամբ... Մի խոսքով՝ ճիշտ եւ ճիշտ **Աստծո** խոստմանը համաձայն. *եթե դու մի քայլ անես դեպի ինձ, ես տասը քայլ կանեն դեպի քեզ*: Այս իմաստով, ահա, **ընդառաջը** քրիստոնեական սեր է բովանդակում, մերձավորին միշտ սատարելու պատրաստակամություն...

Սինոն ծերունին, հիշո՞ւմ ես, ապրեց այնքան, միչեւ արժանացավ **Տիրոջը** տեսնելու երանությանը: Եւ մանուկ Հիսուսին տաճարում **ընդառաջ** գնալով՝ մի բովանդակալից քրիստոնեական տոնի առիթը դարձավ...

Տեառնընդառաջը մեր հինգ տաղավար տոներից մեկն է... Ու տարվա մեջ առնվազն երկու անգամ, հենց այդ տոնի առիթով՝ **Տիրոջը** ու դրանից հետո արդեն Տարեմուտին մեր մտքերը կենտրոնանում են **ընդառաջ** այս անգամ **Նոր տարվան**:

Ամանորին ընդառաջ՝ փորձում ենք ավարտին հասցնել մեր կիսատ ձեռնարկները. եւ տանը, եւ աշխատավայրում կամ այլուրեք... Որտեղ էլ որ լինենք, ինչ գործի էլ որ ձեռք գարկած լինենք:

Ամանորին ընդառաջ՝ փորձում ենք մի նոր բան ավելացնել մեր օջախներում. մի բան նորոգում կամ մի նոր իր կամ հագուստ ենք գնում: Դե իսկ մեր մայրերը, քույրերն ու կանայք ամեն բան մաքրում, հստակեցնում, դասավորում, թարմ տեսք ու շունչ են հաղորդում մեր տան բոլոր անկյուններին...

Ամանորին ընդառաջ՝ նաեւ Նոր տարվա սեղանի պատրաստության խնդրով ենք լինում մտահոգ. հարուստ թե աղքատ տրտմջում գներից, բայց կարեցածի չափով, ի վերջո, կարողանում ենք ուրախացնել մեր ընտանիքի անդամներին ու մինչեւ երեսունմեկի գիշերը որքան դժգոհ, այնքան գոհ ու զվարթ ենք լինում ճիշտ կեսգիշերից հետո:

Իսկ թե որքա՞ն երազներ, հույսեր ու ծրագրեր ենք կառուցում մեր սրտերում՝ Նոր տարվան ընդառաջ, մի մասն արտահայտում բարձրաձայն, իսկ ողջը միայն Աստծուն է հայտնի:

Մենք էլ Քեզ հետ, սիրելի՛ ընթերցող, Ամանորին **ընդառաջ**, այս հրաշալի բառի ողջ իմաստով՝ միմյանց ընդառաջելու հորդորով լցնենք մեր սրտերը, որպեսզի Տարեմուտից առաջ, երբ նորից հանդիպենք, մեր մաղթանքները իրոք գործացնեն մեր **հավատը** միմյանց ու մեր **գալիքի** հանդեպ: **Գ.Մ.**



Վասն մանկանց

Համագործակցությունն ընդլայնելու պատրաստակամությամբ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյան** ընդունել է ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ **Քրիստինե Վայգանդի** գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա են եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալներ **Արթուր Մարտիրոսյանը** եւ **Ժաննա Անդրեասյանը**: Պաշտոնը ստանձնելու կապակցությամբ նախարարը շնորհավորել է Քրիստինե Վայգանդին եւ ընդգծել ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աջակցությամբ իրագործվող ծրագրերի կարեւորությունը, որոնք բխում են հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների քաղաքականությունից: Հանրակրթության ոլորտի մարտահրավերներին լավագույն արձագանքելու եւ առկա խնդիրները լուծելու համատեքստում Վահրամ Դումանյանը երկու կառույցների միջեւ արդյունավետ համագործակցությունն առավել խորացնելու պատրաստակամություն է հայտնել:

Հարունակությունը՝ էջ 2

Ավարտական

Այսուհետ կկրեն մեծ մտածող Մոնտեսորյի անունը

Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի է ունեցել Հայաստանում ֆրանսիական համալսարանի՝ 2020-2021 ուստարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման արարողությունը: Նրանք այսուհետ կկրեն մեծ մտածող եւ փիլիսոփա Մոնտեսորյի անունը: Միջոցառման ընթացքում ողջույնի խոսքով հանդես են եկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը**, Արտաքին գործերի նախարարի տեղակալ **Պարույր Հովհաննիսյանը** եւ Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան **Աճա Լույսն**: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը շնորհավորել է շրջանավարտներին՝ մշելով, որ ՀՀ-ում մեծ դերակատարում ունի հայ-ֆրանսիական միջբուհական համագործակցության գործում եւ կարող է դառնալ կարեւորագույն հարթակ՝ տարածաշրջանում կրթահետազոտական Ֆրանկոֆոն համալիրի ստեղծման եւ կայուն զարգացման համար:

Հարունակությունը՝ էջ 2

Համակարգ

Դասագրքերով ապահովելու կարգը

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել է ՀՀ ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու կարգը, որով կարգավորվում են հաստատությունները դասագրքերով ապահովելու համար անհրաժեշտ հայտերի ձեւավորման, դասագրքերի բաշխման եւ շրջանառության հետ կապված իրավահարաբերությունները: Հանրակրթական առարկաների դասագրքերի ապահովման գործընթացը համակարգում է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը: Ներդրումային գունարանների միջոցներով իրատարակված դասագրքերով ապահովելու համար անհրաժեշտ հայտերի ձեւավորման եւ դասագրքերի շրջանառության գործընթացն իրականացվում է Դասագրքերի եւ տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի կառավարման ավտոմատացված համակարգի միջոցով: ՀՀ պետական բյուջեի եւ օրենքով չարգելված այլ միջոցներով իրատարակված դասագրքերով ապահովելու համար՝ անհրաժեշտ հայտերի ձեւավորման եւ դասագրքերի շրջանառության գործընթացն իրականացվում է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի՝ կրթության կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով:

Հարունակությունը՝ էջ 2

Դասագրքերով ապահովելու կարգը

սկիզբը՝ էջ 1

Յուրաքանչյուր տարի՝ մինչև օգոստոսի 20-ը, ԿԳՄՍ նախարարությունը հաստատում է սովորողների ծնողների (օրինական ներկայացուցիչների) կողմից դասագրքերի օգտագործման դիմաց ներդրումային գումարների տարեկան չափը: Տվյալ դասարանի դասագրքերի համար, այդ թվում՝ նույն առարկայի մեկից ավելի հրատարակչությունների կողմից հրատարակվող դասագրքերի պարագայում, կարող է սահմանվել գումարային ներդրման միասնական չափ:



Սահմանամերձ համայնքների ուսիստատությունների սովորողներին հատկացված դասագրքերի գումարները փոխհատուցվում են համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման պահանջների: Ընտանիքների անապահովության զննահատման համակարգում հաշվառված կամ պետության կողմից իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված ընտանիքների սովորողներին հատկացվող դասագրքերի համար ներդրումային գումարների փոխհատուցումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներով «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրի շրջանակում: Տվյալ հաստատության սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների ցուցակը կազմվում է մանկավարժական և ծնողական խորհուրդների համատեղ նիստում և հաստատվում տնօրենի կողմից:



Յուրաքանչյուր տարվա ուսումնական պարապմունքների ավարտից հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում, սովորողները վերադարձնում են իրենց հատկացված բոլոր դասագրքերը՝ բացառությամբ քննություն և վերաքննություն ունեցող սովորողների, որոնք դասագրքերը հանձնում են մինչև տվյալ ուսումնական տարվա ավարտը: Գրադարանում պահվող, երաշխավորված և գործածության մեջ գտնվող դասագրքերի ցանկում ընդգրկված դասագրքերը հաջորդ ուսումնական տարի հատկացվում են համապատասխան դասարանների սովորողներին: Ուսիստատության բոլորին տեսանելի վայրում փակցվում է տվյալ ուսումնական տարում գործածության երաշխավորված դասագրքերի ներդրումային գումարի չափի վերաբերյալ ԿԳՄՍ նախարարի հրամանի պատճենը:

Հեղինակ՝ ԶՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Համագործակցությունն ընդլայնելու պատրաստակամությամբ

սկիզբը՝ էջ 1

Վահրամ Դումանյանը փաստել է, որ ներկայում ԿԳՄՍ ոլորտներում իրականացվում են լայնածավալ բարեփոխումներ՝ մասնավորապես մատնանշելով «Հանրակրթության մասին» օրենքում նախատեսվող փոփոխությունները և Կրթության զարգացման ռազմավարության նախագիծը:

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Քրիստինե Վալանդին իր հերթին նշել է, որ կրթության ոլորտն այն հիմնական չորս ուղղություններից մեկն է, որն առաջիկա չորս տարիների համար ամրագրվել է ՀՀ կառավարության հետ համագործակցության շրջանակում: Նա շեշտել է, որ ԿԳՄՍ-ի հետ առկա է երկարամյա և արդյունավետ համագործակցության փորձ ընդգծելով, որ նախարարության համակարգման ոլորտներն իրավամբ շատ լայն են նախադպրոցական կրթությունից մինչև գիտություն, մշակույթ, սպորտ և երիտասարդություն: Քրիստինե Վալանդին փաստել է, որ ներկայում ԿԳՄՍ նախարարությունն ակտիվորեն գործակցում է ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ «Գլոբալ գործընկերությունը կրթության ոլորտում» (GPE) ծրագրի շրջանակում, որի նպատակը հանրակրթության ոլորտի բարեփոխումներն աջակցելն է՝ համախմբելով միջազգային գործընկեր կառույցներին, քաղաքացիական հասարակությանը և մասնավոր հիմնադրամներին:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ ժամնա Անդրեասյանը բարձր է գնահատել կրթության շարունակականության և հեռավար կրթության ապահովման գործում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի բովանդակային և տեխնիկական աջակցությունը՝ մատնանշելով ԿՏԱԿ-ում ստեղծված նկարահանման տաղավարի կառավարման և տեսադասերի պատրաստման գործընթացը: Նա նաև ընդգծել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությունը նախադպրոցական այլընտրանքային ծախսարդյունավետ մոդելների ներդրման առումով: Անդրադառնալով GPE-ի շրջանակում համագործակցությանը՝ ժամնա Անդրեասյանը վստահություն է հայտնել, որ ծրագրի շրջանակում իրականացված հետազոտությունները կօգնեն, որ հանրակրթության բարեփոխումները լինեն փաստապես՝ որպես օրինակ բերելով նոր չափորոշիչների կարելու բաղադրիչ հանդիսացող գնահատման համակարգը:



ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Այսուհետ կկրեն մեծ մտածող Մոնտեսորի անունը»,- նշել է Արթուր Մարտիրոսյանը՝ հավելելով, որ ԿԳՄՍ նախարարությունը մշտապես իր աջակցությունն է ցուցաբերել համալսարանի գործունեությանը և շարունակելու է խթանել բուհի զարգացմանն ուղղված նոր նախաձեռնությունները:

Այսուհետ կկրեն մեծ մտածող Մոնտեսորի անունը

սկիզբը՝ էջ 1

«Սիրելի՛ շրջանավարտներ, դուք, անշուշտ, նպաստելու եք Հայաստանի Հանրապետության տնտեսության հետագա զարգացմանը և ձեր նպաստն եք բերելու հայ-ֆրանսիական բարեկամական հարաբերությունների ընդլայնմանը: Վստահ եմ, որ Հայաստանի ֆրանսիական համալսարանում ձեռք բերված գիտելիքներն էապես ծառայելու են այդ նպատակներին: ԿԳՄՍ նախարարության անունից ցանկանում եմ վերահաստատել, որ համալսարանը, լինելով կրթագիտական և հետազոտական հարթակ, լավագույնս նպաստում է հայ-ֆրանսիական բարեկամական համագործակցության զարգացմանը, նոր հնարավորությունների ստեղծմանը և նախաձեռնությունների իրականացմանը»,- նշել է Արթուր Մարտիրոսյանը՝ հավելելով, որ ԿԳՄՍ նախարարությունը մշտապես իր աջակցությունն է ցուցաբերել համալսարանի գործունեությանը և շարունակելու է խթանել բուհի զարգացմանն ուղղված նոր նախաձեռնությունները:

Փոխնախարարի հանդգնմամբ՝ ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանության և Հայաստանում ֆրանսիական համալսարանի հետ ԿԳՄՍ նախարարության արդյունավետ համագործակցությունը կլինի շարունակական՝ ի նպաստ երկու պետությունների զարգացման: Արթուր Մարտիրոսյանը նաև շնորհակալություն է հայտնել Հայաստանում ֆրանսիական համալսարանի ղեկավարությանն ու ռեկտոր Բերտրան Վենարին՝ բուհի զարգացման գործում ներդրած ջանքերի համար:

Մարտիրոսյանն իր հերթին ընդգծել է «Գլոբալ գործընկերությունը կրթության ոլորտում» (GPE) ծրագրի և Կրթության զարգացման ռազմավարության կապը՝ հավելելով, որ ՀՀ կառավարության գործողությունների պլանում ամրագրված ռազմավարության նախագիծն առաջիկայում կքննարկվի զարգացման գործընկերների հետ:

Անդրադառնալով փոքրաթիվ և սահմանամերձ համայնքներում որակյալ կրթության հասանելիությանը՝ նախարար Վահրամ Դումանյանը նշել է, որ դա լրջագույն խնդիր է, որի լուծման նպատակով ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել մի շարք գործընթացների իրականացմանը, օրինակ՝ հանրակրթական ուսումնական այն հաստատություններում, որտեղ առկա է ուսուցիչների պակաս, այս ուսումնական տարվանից փորձնական կարգով մեկնարկել է 18 մենթոր դպրոցների առաջատար ուսուցիչների կողմից հեռավար ուսուցման գործընթացը: ԿԳՄՍ նախարարը մատնանշել է նաև մյուս փոփոխությունը, այն է՝ Կապան խոշորացված համայնքի գյուղական բնակավայրերի համար հաստատվել է կրթական ծառայությունների ապահովման ծրագիր, որով նախատեսվում է կրթական նոր մոդելի գործարկում:

Հանդիպման ընթացքում արծարծվել են նաև հանրապետության ներառականության, ուսուցիչների վերապատրաստման, ոչ ֆորմալ կրթության և երիտասարդության, ինչպես նաև կրթությունից դուրս մնացած երեխաների վերաբերյալ մի շարք հարցեր:



ՀՀՀՀ ռեկտոր, պրոֆեսոր Բերտրան Վենարը ևս շնորհավորել է շրջանավարտներին՝ նշելով, որ իր համար մեծ հպարտություն է լինել նման խելացի, լայն աշխարհայացք ունեցող և նպատակասլաց երիտասարդների ռեկտորը: Նա ընդգծել է, որ համալսարանում կարելու է ուսուցանվող առարկաների ու աշխատաշուկայի պահանջների համապատասխանությունը, ինչի շնորհիվ շրջանավարտները հաջողության են հասնում իրենց մասնագիտական գործունեության մեջ:

Միջոցառման ընթացքում նշվել է, որ ՀՀՀՀ-ի հաջողության գրավակասներից մեկն այն է, որ շրջանավարտներին շնորհվում է 2 պետական դիպլոմ՝ հայկական և ֆրանսիական (եվրոպական), որը հնարավոր չէր լինի, եթե Հայաստանում ֆրանսիական համալսարանը չուներ այնպիսի հավատարիմ գործընկերներ, ինչպիսիք են ժամ Մուլեն Լիոն 3 համալսարանը և Պոլ Սաբատիե Թուլուզ 3 համալսարանը:



Հ. ԶՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Աշխարհի հետ

Ներառական

Որպեսզի երիտասարդները միմյանց հետ շփվելու հնարավորություն ստանան

Նախադպրոցական կրթության մատչելիության համար

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Դումանյանը ընդունել է ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսանդր Կոնյուկին: Հանդիպմանը ներկա է եղել նաև նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:



Օպերայի և բալետի ազգային թատրոնների միջև հնարավոր համագործակցությունը: Այդ համատեքստում կարելի է թատրոնների արտիստների փոխայցելությունների իրականացումը:

Կողմերն անդրադարձել են նաև ուսանողների փոխանակման ծրագրերի իրականացմանը: Զանգիայանը կողմնակալ է քննարկելով բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում միջկառավարական համաձայնագրի ստորագրման հնարավորության հարցը: Նախարարը և դեսպանը կարելի է նաև սպորտի ոլորտում համագործակցության խորացումը:

Հանդիպմանը կողմերը քննարկվել են նաև երկկողմ հետաքրքրություններ կապակցությամբ: Մասնավորապես դեսպանը ընդգծել է Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական ու Բելառուսի

հնարավորություն ստանան, իսկ դրա լավագույն միջոցը կրթությունը, մշակույթն ու սպորտն են»,- նշել է նախարարը և հավելել, որ հատկապես գիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում երկու երկրներն ունեն շատ ընդհանրություններ:

Ալեքսանդր Կոնյուկին իր հերթին մատնանշել է այն ուղղությունները, որոնցով բելառուսական կողմը պատրաստ է գործնական քայլերի: Մասնավորապես դեսպանը ընդգծել է Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական ու Բելառուսի

Ագրարային համալսարան

Կներդրվի ճշգրիտ գյուղատնտեսության մագիստրոսական ծրագիր

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը և հունական «Արատոս գրուպ» ընկերությունը համագործակցության հուշագիր են ստորագրել, որի համաձայն՝ ՀԱԱՀ-ում կներդրվի ճշգրիտ գյուղատնտեսության մեկամյա մագիստրոսական ծրագիր, և կմշակվեն համատեղ հետազոտական նախագծերի հայտեր: ԵՄ-ից համաֆինանսավորվող հետազոտական ծրագրերի համար:



Հուշագիրը ստորագրել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ղեկավար Վարդան Ուռուտյանը և «Արատոս գրուպ» ընկերության նախագահ Նիկոս Բոգոնիկյուսը:

Փաստաթղթի կնքման արարողությունը, որը տեղի է ունեցել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում, ներկա են եղել կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, ԲՏԱ նախարարի խորհրդական Հայկ Ասլանյանը և «Արատոս գրուպի» նախագահի խորհրդական Կոստաս Պլատիկոստասը:

Շնորհավորելով ներկայացրին հուշագրի կնքման կապակցությամբ՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը կարելի է երկու երկրների միջև տարիներ շարունակ ձեւավորված բարեկամական հարաբերությունները և վստահությունը հայտնել, որ պետք է ավելի սերտացնել այդ համագործակցությունը: Փոխնախարարի խոսքով՝ Հայաստանի ազգային ագրարային

համալսարանի հերթական նախաձեռնությունը կարելի է Կառավարության կրթական քաղաքականության իրականացման տեսանկյունից:

«Համալսարանը մեծ աշխատանքներ է իրականացնում այնպիսի նոր որակավորումներ և մասնագիտություններ ներդրելու ուղղությամբ, որոնք լավագույնս կնպաստեն աշխատաշուկայի պահանջների բավարարմանն ու Կառավարության ռազմավարական ծրագրերի իրականացմանը»,- նշել է Արթուր Մարտիրոսյանը՝ հույս հայտնելով, որ հետագայում նմանօրինակ համագործակցություն կլինի նաև ՀՀ մյուս բուհերի հետ:

«Արատոս գրուպի» նախագահ Նիկոս Բոգոնիկյուսն իր հերթին նշել է, որ ճշգրիտ գյուղատնտեսության մագիստրոսական ծրագրից բացի՝ գործակցությունը նաև կնպաստի համալսարանի կարողությունների զարգացմանը: Նա շեշտադրել է Հունաստանի հայկական համայնքի կարելի դերը Հայաստանի հետ համագործակցության և ՀՀ բուհերի՝ եվրոպական կրթագիտական միջավայրում ինտեգրելու գործում:

ՀԱԱՀ ղեկավար Վարդան Ուռուտյանի խոսքով՝ «Արատոս գրուպի» գործընկերների մասնագիտական ներուժն ու միջազգային պատկառելի փորձը մեծապես օգտակար կլինեն բուհի համար, որն ագրոտեխ-

նոլոգիական գերազանցության կենտրոն դառնալու ճանապարհին է: Նա վստահություն է հայտնել, որ ընկերության հետ գործակցությունը բուհին ավելի մրցունակ կը դարձնի ազգային և եվրոպական կրթական միջավայրում:

«Արատոս գրուպ» ընկերության ներկայացուցիչներն այցելել են նաև Հայաստանի ազգային ագրարային համալսարան, որտեղ ծանոթացել են Ջրային և հողային ռեսուրսների կառավարման հետազոտական կենտրոնի, Ագրոտեխնոլոգիաների ինկուբատորի և նորարարական ուսումնական ջերմատան աշխատանքներին:

Յ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

շարունակությունը՝ էջ 4



Նախադպրոցական կրթության մատչելիության համար

սկզբը՝ էջ 3

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը տարածքային մակարդակում

Տարածքային մակարդակում ծառայությունները տրամադրվում են այն երեխաներին, ովքեր տվյալ մակարդակում սահմանված կարգով գնահատվել են ճանաչվել են որպես կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող: Տարածքային մակարդակում ծառայությունները տրամադրում են ՏՄԱԿ-ը կամ հաստատությունը, եթե այնտեղ առկա է ՄՀ աջակցության խումբ: Տարածքային մակարդակում ծառայությունները տրամադրվում են ուսումնական հաստատության տնօրինության կամ երեխայի ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա: ՄՀ աջակցության խումբը եւ մանկավարժական աշխատող ծնողի մասնակցությամբ մշակում են երեխայի անհատական զարգացման եւ ուսուցման պլանը, որը մուտքագրվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տվյալների տեղեկատվական համակարգ:

Եթե երեխային տրամադրվող ՄՀ աջակցության ծառայությունը պահանջում է համապատասխան հարմարեցված տարածք, սարքավորումներ եւ գույք, ապա ՏՄԱԿ-ը, ծնողի համաձայնությամբ, կարող է ՄՀ աջակցող ծառայությունները երեխային տրամադրել կենտրոնում: ՏՄԱԿ-ում երեխային ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրումը իրականացվում է անվճար՝ ՏՄԱԿ-ի միջոցներով, պարավունքներից հետո՝ ըստ նախատեսված տեղադրության, ծավալի եւ ժամանակացույցի:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը հանրապետական մակարդակում

Հանրապետական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները տրամադրում է Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը (ՀՄԿ): Այն իրականացնում է համապատասխան կառույցների կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր՝ վերապատրաստման դասընթացներ, մասնագիտական խորհրդատվություններ, աջակցող այցեր: ՀՄԿ-ն ապահովում է երեխայի կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման ու ՄՀ աջակցության միասնական մոտեցումների կիրառումը՝ համակարգելով ՏՄԱԿ-ների աշխատանքը: Այն նաեւ փորձաքննության է ենթարկում շահագրգիռ կազմակերպությունների կողմից երեխաների կրթության կազմակերպմանը վերաբերող ծրագրերն ու մշակումները՝ իրենց նախաձեռնությամբ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան: Այդ գործընթացը նախադպրոցական աստիճանում իրականացվում է ցանկացած տարիքում, երբ երեխայի մոտ դիտվում են նախադպրոցական ուսումնական գործընթացում մասնակցության եւ զարգացման կայուն դժվարություններ: Հաջորդ գնահատումն իրականացվում է ավագ խմբում, նաեւ այն դեպքում, եթե ուսումնառության ընթացքում կարիք է առաջանում ԿՁԱԴԿ-ի աստիճանի փոփոխության:

Անհատական զարգացման եւ ուսուցման պլան

Անհատական ուսուցման եւ զարգացման պլանը (ԱՈւՁՊ) երեխայի կարիքի եւ առանձնահատկությունների հիման վրա կազմված փաստաթուղթ է, որը սահմանում է երեխայի զարգացման, ուսուցման եւ դաստիարակության տարեկան նպատակները, խնդիրները եւ դրանց հասնելու գործողությունները (կարիքի դեպքում նաեւ ՄՀ աջակցող ծառայությունները) եւ ժամկետները՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշիչի եւ կրթական ծրագրերի սահմանված վերջնարդյունքները երեխայի համար հասանելի դարձնելու համար: ԱՈւՁՊ-ը մշակում են ուսումնական հաստատությունը եւ ՏՄԱԿ-ը տարածքային մակարդակի գնահատման արդյունքում ԿՁԱԴԿ ունեցող յուրաքանչյուր երեխայի համար. այն մշակվում է մեկ ուսումնական տարվա համար:

Հավելենք, որ քաղաքացիները եւ շահառու խմբերը մինչեւ դեկտեմբերի 18-ը կարող են նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում:

Հեղինակ՝ ԳՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոն

Չինվորները ծանոթացել են կինոլորտի գաղտնիքներին



«Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոնում» ամփոփվել է «Կինոդպրոց՝ առանց սահմանների» կրթական նախագիծը, որն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ հայտարարած դրամաշնորհային ծրագրի շրջանակում:

ԿԳՄՍՆ երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ եւ շարունակական կրթության վարչության պետ **Գոհար Մամիկոնյանը**, ողջունելով ծրագրի մասնակից զինվորներին, նշել է, որ շատ ոգեւորիչ է եղել դրամաշնորհային ծրագրերի փաթեթում նման նախագծի ներկայացումը: «Երբ բացահայտեցինք, որ նման ծրագիր կա ներկայացված, հանձնաժողովի բոլոր անդամներն այն միաձայն շատ բարձր գնահատեցին: Այս ծրագիրը հնարավորություն է տալիս արվեստի միջոցով մասնագիտական հմտություններ ձեւավորել, ինչպես նաեւ աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց՝ արվեստի դրական ազդեցության շնորհիվ ավելի հեշտ եւ արագ վերադառնալ բնականոն կյանքի, որի կարիքն ունի եւ հասարակությունը, եւ զինվորները: Բոլորս հետեւում ենք «Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոնում» կատարվող իրադարձություններին, թե մեր զինվորները գործունեության ինչպիսի հետաքրքիր տեսակներ են իրենց համար բացահայտում եւ ինչ դասընթացների մասնակցում»,- նշել է Գոհար Մամիկոնյանը՝ ընդգծելով, որ ծրագրի արդյունքներն իրապես շատ ոգեւորիչ են, եւ հետագայում այն վատահարք կունենա շարունակություն: «Երիտասարդների շրջանում պետք է մեծացնել նախաձեռնողականությունը եւ քաղաքացիական ակտիվությունը. կարելի է առաջին քայլն անել է, որին անպայման կիստեղի արդյունքը: Երիտասարդական տեղաբնակչության մեջ ամրագրված քաղաքացիական կրթության շրջանակում ոչ ֆորմալ ձեւաչափով անցկացվող նման դասընթացները նպաստում են մեր հմտությունների ձեւավորմանը»,- ասել է նա:

Երկամսյա ծրագիրն իրականացրել է «Արմ ֆիլմ ինդուստրի դեվելոպմենտ» մշակութային հիմնադրամը, որի համահիմնադիր **Գուր Թադևոսյանը** ներկայացրել է ծրագրի մանրամասները՝ նշելով, որ այն ներառել է ուսուցում, պրակտիկ դասընթացներ, ժամանակակից ֆիլմերի դիտում-քննարկում, հանդիպում ֆիլմերի ստեղծագործական կազմի, անվանի արվեստագետների հետ եւ ավարտական համատեղ ֆիլմի նկարահանում: Նրա խոսքով՝ դասընթացի մասնակիցները

հենց եղել են ֆիլմի հերոսները, քանի որ այն պատերազմի, կյանքի եւ սիրո մասին է: Ըստ Գուր Թադևոսյանի՝ կինոդպրոցում ուսուցանվել են սցենարիստ, ռեժիսոր եւ մոնտաժի ռեժիսոր մասնագիտությունները, եւ մինչ դասընթացին միանալով մասնակիցները մի քանիսն արդեն որոշակի գիտելիքների պաշար ունեին, հետեւաբար ծրագիրն այդ առումով ավելի շատ ուղղված էր մասնագիտական կողմնորոշմանը եւ ոլորտի նկատմամբ լրացուցիչ հետաքրքրություն առաջացնելուն: Այս համատեքստում մի քանի մասնակիցների հետ հետաքրքիր համագործակցություն է ծավալվել, եւ նրանք ներգրավվել են որոշ նախագծերում:

Գոհար Մամիկոնյանը զինվորներին խնդրել է պատմել իրենց տպավորությունների մասին, թե դասընթացի արդյունքում ինչ հմտություններ են բացահայտել եւ ապագա գործունեության մեջ արդյոք իրենց տեսնում են արվեստի ոլորտում:

Ծրագրի մասնակից **Արտյունը** նշել է, որ տպավորված է դասընթացով, քանի որ մինչ այդ կինոլորտի մասին իր տպավորություններն ու գիտելիքները մի քիչ այլ էին: Արտյունն անհամբեր սպասում է մյուս դասընթացին՝ զարգացնելու ներկայում արդիական համարվող 3D մոդելավորման իր հմտությունները, այդ թվում՝ կինոնոն-տաժի ոլորտում:

Մանկավարժական համալսարանի ռեժիսուրայի բաժնի ուսանող **Դավիթը** հետաքրքրված է թատերական ոլորտի նախագծերով. Նարեկացի արվեստի միությունում իր համակուրսեցիների հետ նրանք ցուցադրել են «Կարմիր գլխարկը» 10 բոպեանոց ներկայացումը: Ապագայում նախատեսում են բեմադրել «Մախրոտիկը»՝ այն համադրելով «Անբան Հուռիի»

հետ, որի շրջանակում կլինեն այցելություններ ներառական կրթօջախներ: Դավիթը ներգրավված է նաեւ սոցիալական հոլովակների կոմերցիոն նախագծերում. նա հինգ սցենարի հեղինակ է:

Ծրագրի մյուս մասնակիցը՝ **Էդմոնը**, որը հաղորդավարի փորձ ունի, հաղթել է Առաջին ալիքի հայտարարած մեկամաբանների մրցույթում եւ 5 ամիս կմասնակցի համապատասխան դասընթացների, իսկ **Յուրան** հետաքրքրված է լուսանկարչական արվեստով. նրան արդեն ներկայացվել է մի քանի առաջարկ, որից պետք է ընտրություն կատարի:

Մեզ հետ զրույցում դասընթացի մասնակից **Շիրազն** ասում է, որ իրեն շատ գրավում է ռեժիսուրան, եւ տարիներ առաջ այդ աշխատանքի փորձ ունեցել է: Նրա խոսքով՝ ամեն մի դրվագի մեջ պետք է փորձես գտնել թո հերոսին եւ ինքնադրսեւորվես:

Ավարտական ֆիլմի հերոսներից է նաեւ **Լիլիթը**, որը կամավորության սկզբունքով կենտրոնում անգլերենի դասընթացներ է անցկացնում զինվորների համար: Ի դեպ, այդ կարգն առկա է նաեւ ֆիլմում: Նրա խոսքով՝ ոչ ֆորմալ կրթության այս ձեւաչափով ավելի մտերմիկ հարաբերություններ են ձեւավորում դասընթացի մասնակիցների միջեւ, որն էլ իր հերթին հեշտացնում է նրանց ինտեգրումը:

«Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոնի» տնօրեն տնօրեն **Հայկուհի Սինասյանի** խոսքով՝ կենտրոնում իրականացված 604 կրթական ծրագրերը նպաստել են զինվորների միությունում իր համակուրսեցիների հետ նրանք ցուցադրել են «Կարմիր գլխարկը» 10 բոպեանոց ներկայացումը: Ապագայում նախատեսում են բեմադրել «Մախրոտիկը»՝ այն համադրելով «Անբան Հուռիի»

Այդ առումով Գոհար Մարտիրոսյանը պարզաբանել է, որ հաջորդ տարի նախարարությունը երիտասարդության ոլորտում նախատեսում է իրականացնել բավականին թվով ծրագրեր: Նրա խոսքով՝ այդ նպատակով կկազմակերպվեն նաեւ դրամաշնորհներին դիմելու համար հայտեր ներկայացնելու հմտությունների ձեւավորմանն ուղղված իրազեկման աշխատանքներ, որին բոլոր հետաքրքրվողները կարող են դիմել: Ըստ Գոհար Մարտիրոսյանի՝ այդ հարցում ԿԳՄՍ նախարարությունը պատրաստական է աջակցել բոլորին:

Գ. ԳՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Ի խնկարկուն

Խոնարհումի եւ հիշատակի խաչքար

Երեւանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարանի բակում տեղի ունեցավ ուսումնական հաստատության 44-օրյա պատերազմում զոհված տասնչորս սաներին նվիրված խոնարհումի ու հիշատակի եւ խաչքարի բացման արարողություն: Միջոցառումն սկսվեց հայրենասիրական երգով: Բացման խոսքով հանդես եկավ ուսումնարանի սան Զավեն Սարգսյանը: Այնուհետ 3-րդ կուրսի մի խումբ ուսանողներ զինվորական համազգեստներով ու զինվորական կարգով մեկ առ մեկ, անուն առ անուն ներկայացրին տասնչորս նահատակ հերոսներին, նրանց անցած մարտական ուղին ու պարգևատրումները՝ հավերժ փառք տալով նրանց: Ուսանողները, որ հաջորդ ամառ պետք է զորակոչվեն բանակ, եղովեցին անձնվիրաբար ծառայել հայրենիքին: Նրանք եւ 2-րդ կուրսի խոհարար խմբի երկու ուսանողուհիներ կատարեցին «Բալլադ զինվորի» երգը:



տագիտություն հայտնեց միջոցառմանը ներկա 44-օրյա պատերազմի մասնակիցներին:

Զոհված ուսանող Նարեկ Արտուշյանի հայրը՝ Արսեն Արտուշյանը, Տեր Զորայրը եւ բարերար Ռուդիկ Ավդալյանը, ում բարերարությամբ ստեղծվել է խաչքարը, 33 պետական օրհներգի հնչյունների ներքո բացեցին

խաչքարը: Այս խոսք ասաց Տեր հայրը. ըստ նրա՝ տղաներն ընկան, որ մենք ապրենք, մեր պարտքն է հիշել նրանց եւ փոխանցել նրանց հիշատակը եկող սերունդներին:

Տեր Զորայրը իր խոնարհումը հայտնեց նաեւ հերոսածին մայրերին, նրա առաջակով ներկաները Տերունական աղոթքը բարձրացրին առ Աստված, այնուհետեւ կատարվեց հոգեհանգստյան կարգ կրթօջախի նահատակ սաների եւ 44-օրյա պատերազմի մյուս բոլոր նահատակների համար:

Տնօրենը ներկայացրեց բարերարին «Վեճուս» ֆիրմայի տնօրեն Ռուդիկ Ավդալյանին: Վերջինս եւ Արսեն Արտուշյանը խաչքարի մոտ տեղադրեցին արծաթափայլ եղեւնի: Խաչքարի մոտ ուսումնա-

տարվեց հոգեհանգստյան կարգ կրթօջախի նահատակ սաների եւ 44-օրյա պատերազմի մյուս բոլոր նահատակների համար: Տնօրենը ներկայացրեց բարերարին «Վեճուս» ֆիրմայի տնօրեն Ռուդիկ Ավդալյանին: Վերջինս եւ Արսեն Արտուշյանը խաչքարի մոտ տեղադրեցին արծաթափայլ եղեւնի: Խաչքարի մոտ ուսումնա-

րանի կողմից տնկվել են անվանական եղեւնիներ՝ կրթօջախի համուն հայրենիքի զոհված ուսանողների անուններով:

Ուսումնարանը խաչքարի մոտ ծաղկեպսակ էր զետեղել: Վերջում հյուրերը եւ ծնողները ծաղիկներ խոնարհեցին խաչքարի եւ եղեւնիների մոտ:

Միջոցառմանը ներկա էին նահատակ շրջանավարտների ծնողները, հարազատները, ուսուցչական կազմը, աշակերտներ:

Վերջում կուզենայինք մեկ առ մեկ թվարկել ուսումնարանի՝ այլեւ անմահ սաների անունները, ովքեր աշխարհի հզորների նեճ խաղերի հետեւանքով բռնկված պատերազմում ընկան՝ համուն հայրենիքի՝ Կուլոյան Մխիթար Ռազմիկի, Ունուխյան Գեորգ Գարիկի, Վարդանյան Սերգեյ Խոսրովի (կամավոր), Մկրտչյան Արտյոն Տիգրանի, Աշոտյան Աշոտ Արմանի, Ալջիկյան Արսեն Լեւանի, Սայադյան Զրանտ Կարենի, Գեորգյան Գոռ Արմենի (կամավոր), Բաղդիշյան Գեորգ Ստեփանի, Վարդանյան Դավիթ Ռոբերտի, Արտուշյան Նարեկ Արսենի, Մանուկյան Լեւոն Արաչի, Սուքիասյան Արման Արտակի, Վանյան Վլադիմիր Վարդանի (կամավոր), Մշեցի նաեւ անհետ կորած Սպարտակ Արմանի Թամարյանի անունը:

Հավերժ փառք ու խոնարհում ՆՐԱՆՑ:

Հրայրյա ԲԱԼՈՅԱԼ

Դպրոցը հերոսացել էր...

Տխրության, բախժի, անդարձ կորստից վեր հանող ցասման, հիշողությունից կարոտ ծնող զգացումների ցավն էր պարուրել ներկաների հոգիներին: Օրը լալիս էր երկնքից թափելով անձեւ, անձրեւի արցունք դարձած կաթիլները, որն արտասվում էր, ներկաները նույնպես:

մայրի միջոցներով (քանդակագործ Գարիկ Հովհաննիսյան): Ներկաները, հուշակոթողին ծաղիկներ խոնարհելով, տղաների հոգիների անմահության համար իրենց աղոթքի եւ օրհնության խոսքն ուղղեցին առ Աստված:


Զոհված զինվորների հարազատներն ու ընկերները հուշարձանի հարող այգում տնկեցին կյանքի հավերժությունը խորհրդանշող անվանական եղեւնիներ:

Այնուհետեւ, պետական հիմնի հնչյունների ներքո դեպի երկինք խոյացավ Եռադույնը՝ խորհրդավոր ու հուզիչ թուպներ պարզելով ներկաներին:

Անվանակոչման համար ընտրվել էր դպրոցի անենամենն ու լուսավոր դասասենյակը, որտեղ իրենց ուսումնառության տարիներն են անցկացրել զոհված տղաներից Ժորան ու Զրանտը: Դասասենյակը հիմնադրոգվել է կահավորվել է ֆրանսիական բարերարներ Արսեն եւ Աննա Երանոսյանների ֆինանսական ներդրման միջոցներով: Աշխատանքների կազմակերպչական գործընթացն իրականացրել է «Ղարաբաղյան պատերազմի վետերանների միություն» հ/կ-ն:

Դասասենյակում ստեղծվել է տղաներին նվիրված հուշանկյուն՝ համալրված իրենց անձնական իրերով, լուսանկարներով, պատվոգրերով ու շքանշաններով:

Մեկն լուռ ու պապակված պատերը կենդանի շունչ զգացին, երբ դասասենյակում հնչեցին Արցախյան երկրորդ պատերազմում



ընկած ռազմիկների կյանքի, մարտական գործողությունների, հայրենասիրական նկրտումների մասին պատմող հոլովակները:

Հրանտ Արթուրի Եղիազարյան...

Ծնվել է 2000 թվականին Երեւանում: Ընտանիքի միակ զավակն էր: Բանակ է զորակոչվել 2019-ին, ծառայել է Մատաղիսում: Պատերազմի առաջին օրերից միացել է հայրենիքի պաշտպանությանը: Կռվել է չեմբարկվելով Մահաճի հրամանին: Վիրավոր վիճակում կռվել է մինչեւ վերջին շունչը եւ զոհվել հոկտեմբերի 28-ին, Մատաղիսում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Ժորա Գրիգորի Անդրեասյան...

Ծնվել է 2002 թվականին, Երեւանում: Ծառայությունն իրականացրել է Հաղորթի ակադեմիային վաշտում: Դաժան մարտեր է մղել Ասկերանի, Հաղորթի, Մարտունու շրջաններում: Հայտնվել է շրջափակման մեջ, բայց հաջողվել է դուրս գալ եւ շարունակել պայքարը ոստիկանի ղեկով: Ընկել է քաջաբար՝ նոյեմբերի 7-ին՝ Շուշիի համար մղվող մարտերում:

Ժորա Արմենի Մարդանյան...

Կրտսեր սերժանտ: Ծնվել է 2001 թվականին, Երեւանում: Զինվորական ծառայություն է իրականացրել Մատաղիսում: 44 օր

անձնագրի պայքար է մղել ոստիկանի կյանքը տալով համուն հայրենիքի: Զոհվել է նոյեմբերի 9-ին Մարտակերտում:

Արաչի Աշոտի Բաղդասարյան...

Ծնվել է 1996 թվականին, Երեւանում: Ծառայել է Քարվաճառում որպես գնդացրորդ: Մասնակցել է Ապրիլյան քառօրյային: Սեպտեմբերի 28-ին կամավոր մեկնել է ռազմաճակատ, կռվել համուն Արցախի՝ չեմբարկվելով Մահաճի հրամանին: Զինակից ընկերների հետ միասին թշնամու դիրքերից առգրավել է զենք, քարտեզներ, փաստաթղթեր: Վերջին մարտը մղել է Ջրականում՝ հոկտեմբերի 3-ին՝ գիշերը, եւ այդ օրվանից նրա մասին չկա ոչ մի տեղեկություն:

Տղաներին նվիրված հարգանքի ու մեծարման, հիշատակի, խոնարհումի ու երախտագիտության խոսքեր հնչեցին նաեւ դպրոցի դահլիճում կազմակերպած հուշ-ցերեկույթի ընթացքում:

Ազգային երգն ու պարը, հայրենաշունչն ու ոգեղեն բանաստեղծական տողերը տխրության հետ մեկտեղ ոգեղեն շունչ հաղորդեցին ներկաներին՝ կրկին ու նորից հաստատելով մի պարզ ճշմարտություն՝ քաջորդիների մահը գալիք հաղթանակների գրավականն է լոկ:

Նաիրա ԱՐԲԱՅԱՅԱՆ Մ. Նալբանդյանի անվան հ. 33 դպրոցի ուսուցչուհի

«Հայաստանի հմտություններ»

37 ուսանող՝ ազգային մրցույթում

Սեկնարկել է «Հայաստանի հմտություններ» ազգային մրցույթի եզրափակիչ փուլը, որն անցկացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ:

Միջոցառմանը մասնակցել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչներ, սոցիալական գործընկերներ, ՄԿՈՒ հաստատությունների ուսանողներ, դասախոսներ, վարպետներ և փորձագետներ:

Միջոցառման մեկնարկն ազդարարել է Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի տնօրեն, «Աշխարհի հմտություններ» կազմակերպության ՀՀ պաշտոնական պատվիրակ Տաթևիկ Գասպարյանը: Նա նշել է, որ «Աշխարհի հմտություններ» (WORLD SKILLS) մրցույթը միջազգային շարժում է, որը միավորում է աշխարհի շուրջ 85 երկրների, որտեղ բնակվում է աշխարհի բնակչության 2/3-ը: 2012 թվականից Հայաստանը դարձել է այս շարժման մասնակից, իսկ 2016 թվականից այդ ընտանիքի լիիրավ անդամ: Տաթևիկ Գասպարյանի խոսքով մրցույթի նպատակն է բարձրացնել նախնական (արհեստագոր-

ծական) և միջին մասնագիտական զբաղմունքների վարկանիշը, հմտությունների մրցույթների կազմակերպման և անցկացման միջոցով զարգացնել մասնագիտական կրթությունն ինչպես յուրաքանչյուր երկրում, այնպես էլ ամբողջ աշխարհում:

Մրցույթի մասնակիցներին ողջունել է ԿԳՄՍՆ Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության ՄԿՈՒ քաղաքականության մշակման և ռազմավարության բաժնի պետ Արմենուհի Պողոսյանը: Նա շնորհակալություն է հայտնել Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի ողջ թիմին մրցույթի կազմակերպման հայաստանյան և միջազգային փուլերում ներդրած մեծ ջանքերի համար:

«Ինչպես աշխարհի շատ երկրներում, Հայաստանում ենս մենք կարելու ենք այս մրցույթի անցկացումը և անում հնարավորը՝ առաջիկայում ավելի մեծ մասնակցություն ապահովելու համար թե՛ մասնակիցների թվի, թե՛ մասնագիտությունների ընդլայնման առումով: Միանալով «Աշխարհի հմտություններ» մրցույթի մեծ ընտանիքին՝ մենք ստանձնել ենք



պարտավորություն՝ համապատասխանեցնելու մեր երկրի ՄԿՈՒ ոլորտի հմտությունները միջազգային չափանիշներին: Այս մրցույթն ուսանողների համար իրենց մասնագիտությունն արժեւորելու, աշխատաշուկայում արժանապատիվ տեղ ունենալու և հայրենիքում արարելու լավագույն մոտիվացիան է»,- նշել է Արմենուհի Պողոսյանը:

Միջոցառման մասնակիցներին ողջունել են նաև Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանի տնօրեն Զնարիկ Ահարոնյանը, «Ատեքս» նորածեղության կենտրոնի տնօրեն, «Հայաստանի հմտություններ» թիմի «Նորածեղության տեխնոլոգիա» հմտության փորձագետ Կարինե Դնոյանը, ինչպես նաև «G-n R P» նորածեղության արահի տնօրեն, 2013թ. Լեյպցիգում կայացած «Աշխարհի հմտություն-

ներ» մրցույթի «Նորածեղության տեխնոլոգիա» հմտության մասնակից Արփինե Ղուկասյանը, որը ներկայացրել է իր հաջողության ճանապարհը՝ բուլեջից բիզնես:

Այնուհետև Արմավիրի արվեստի պետական քոլեջի սաները հանդես են եկել երաժշտական համարներով: Միջոցառման ավարտին տեղի է ունեցել երդման արարողությունը, որի ընթացքում մրցույթի մասնակիցները և հանձնաժողովի ներկայացուցիչը խոստացել են արդար մրցել և գործել լիակատար անկողնակալությամբ՝ հարգելով և պահպանելով էթիկայի ու վարքագծի, նաև մրցույթի կանոնները՝ «Աշխարհի հմտություններ» շարժման ազնվություն, խորականության բացառում, արդարություն, հավասարություն և թափանցիկություն:

«Մենք դա անում ենք մեր թիմերի պատվի համար՝ հարգելով «Աշխարհի հմտություններ» շարժման հիմնարար սկզբունքները և աշխարհը հմտությունների միջոցով ավելի լավ դարձնելու առաքելությանը»,- վստահեցրել են մրցույթի մասնակիցները:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տեսակետ

Ուսուցիչ - ծնող կամ ծնող - ուսուցիչ. գումարելիների տեղափոխությունից գումարը չի փոխվում

«Ուսուցիչը երկրորդ ծնող է» միտքը խորհրդային մնացորդ է, թե՛ հանրային ընդունելության արժանացած արդիական ձեւակերպում: Միանշանակ պատասխանել ճարտասանական նրբերանգով այս հարցին գուցե անհնար չէ, բայց բարդ է, քանի որ հանրությունն ինքնին տարակարծիք, տարաբնույթ, տարակառույց միավոր է: Իսկ դպրոցին, ուսուցչին, ուսման որակին, երկրին պետք է, շատ է պետք այս հարցի պատասխանը: Եթե պատասխանն էլ չձեւակերպվի, գոնե այդ հարցի շուրջ մտածել սկսի հանրությունը, իր օրակարգի կիզակետում պահի, որ մի օր պատասխան գտնի, այլապես Իսահակյանի ահազանգը, թե «կգա ոգու

տով», կվերածվի գորշ ու անդառնալի իրականության, ու վայմեզ... Չհամաձայնողներին ոչ թե հանգեմ, այլ փաստեմ: Ծնողներից շատերը, երբ երեխայի հետ զրուցում են, փոխանակ հարցնեն, թե ինչ են նրանք արել օրվա ընթացքում, փորձեն տալ հատուկ հարցեր, օրինակ՝ «Ի՞նչ լավ բան է պատահել քեզ հետ այսօր դպրոցում» կամ «Ասա՛ ինձ մեկ նոր բան, որ սովորել ես այսօր», հարցնում են. «Դասատուն քեզ հո չի՞վիրավորել», «Ձեր դասարանի Աճին ի՞նչ ստացավ», «Արմենի մաման եկե՛լ էր դպրոց»... Եւ նման անմտություններ: Աստված մի արասցե, որ երեխան ասի, թե ուսուցիչը իրեն ասել է «ասպուշ»... Կսկսվի «բեմոռ ծնող»-ի ելույթը. «Տես ես դրան ինչ են անելու»:

Անկեղծ, չեն ուզում որեւէ գռեհիկ մեջբերում անել. դա պատիվ չի բերի ո՛չ ասողին, ո՛չ լսողին, ո՛չ գրի առնողին և ո՛չ կարդացողին: Բայց կարելու են գրել, որ երեխայի ներաշխարհն է աղճատվում, ու անմտություն է ուսումնառություն կամ որակ ակրկնակել այն երեխայից, ով պիտի ուշադիր և ակնածանքով ուկնդրի և ակնդրի մեկին, ում իր մայրը կարող է վիրավորել. երեխան պարզապես պիտի մտածի, որ իր ուսուցիչը սխալ է, խեղճ է, թույլ է, ու եթե գիտելիք ուժ է, ապա կարելի է եզրահանգել, որ ուսուցիչը նաև գիտելիք չունի ու տալիք չունի:

Յուրաքանչյուր երեխայի համար դպրոց գնալը մարտահրա-

վեր է և կարող է բերել ուսումնառության հետ կապված բազմաթիվ խնդիրներ: Դպրոցում երեխան առանձնանում է ծնողներից, չփվում տարեկիցների հետ, սովորում լսել և կատարել իր համար նոր, բայց կարելու մարդկանց՝ ուսուցիչների առաջադրանքները: Սա, իրոք, լուրջ հոգեբանական փոփոխություն է, որը ծնողը կամ ուսուցիչը միայնակ չի կարող հաղթահարել: Հենց այս գործընթացի մեջ էլ կարելու է նրանց փոխհամաձայնությունը, միմյանց օգնելու անհրաժեշտությունը, նույն նպատակի համար ընդհանուր ճանապարհով քայլելը:

Հոգեբանական բազմաթիվ ընկերություններ հուշումներ են տալիս ծնողներին իրենց երեխաների տագնապները մեղմելու հարցում, և այդ բոլոր հուշումներում առանցքայինը ուսուցչի դերի բարձրացումն է, ուսուցչին որպես օգնական ներգրավելու կարիքը:

Օրինակ՝ հուշումներից մեկը այսպիսին է. «Եթե երեխայի մոտ դպրոց հաճախելու տագնապի նշաններ եք նկատում, մտահոգություն անհապաղ քննարկեք երեխայի ուսուցչի, նրա օգնականի, դպրոցական մասնագետի հետ: Ձեզ կբացատրեն, թե որքանով են նկատված խնդիրները տարիքային կամ անհանգստացնող»: Տեսնո՞ւմ եք, որ երեխայի ուղեղում կատարվում են հնարավոր փոփոխություններ, իսկ ծնողն էլ իր հերթին, ուսուցչին վատաբանելով, ազդում է երեխայի արժեհամակրգի վրա: Իսկ եթե երեխայի մոտ ուսուցչի նկատմամբ գնահատողա-

կան վերաբերմունք ձեւավորվի, ուսուցիչը դառնա կարելու խորհրդատու, մեկը, ով ամեն հարցում կարող է ելք առաջարկել, այս դեպքում երեխան գերծ կմնա հիասթափությունից, ծնող-ուսուցիչ երկընտրանքից, մեկին սիրաշահելու համար մյուսին վատաբանելու դրդումից...


Հիշենք, որ բազմաթիվ հետազոտություններ հանգեցրել են այն կարծիքին, որ լարված ծնողները դպրոց են ուղարկում անհանգիստ ու անվստահ երեխաների: Նրանք պետք է գիտակցեն, որ ուսուցչի դերը, թերեւս, իրենց կարծածից ավելի կարելու է, քանի որ տվյալ ընտանիքը ճանաչվում է երեխայի միջոցով: Ի դեպ, երեխան ծնողից հեռու ինչ-որ պահվածք է ցուցաբերում, եւ խելացի ծնողը կարող է ուսուցչից իմանալ, թե ինքն ինչ բացթողումներ ունի:

Թե՛ ուսուցիչը դպրոցում և թե՛ ծնողը տանը պետք է կարելու երեխային աջակցել մեկը մյուսին փոխարինելով, այսինքն ուսուցիչը դպրոցում պետք է ուսուցանի ծնողի ջերմությամբ, ուշադրությամբ ու հոգատարությամբ, իսկ ծնողը տնային առաջադրանքները վերահսկելիս պետք է առաջնորդվի ուսուցչի խորաթափանցությամբ և մեթոդիկայով: Երեխայի գիտելիքի և բնավորության առաջընթացն ապահովող երկու պատասխանատուներն էլ պետք է ներգրավեն մեկը մյուսին: Ուսուցիչը պետք է մտածի, որ լիովին պատասխանատու է երեխայի լավ կամ վատ արարքների համար և

մեղքը չբարդի ծնողների վրա, իսկ ծնողներն էլ իրենց հերթին պետք է գերզբաղվածության մեջ անգամ ժամանակ հատկացնեն երեխայի ուսումնառության գործընթացին պարբերաբար մասնակցելուն ամեն ինչ չթողնելով ուսուցչի ուսերին: Երկուսն էլ պետք է հաղորդակցության գծեր բացեն: Արդյունքում երեխան կգտնվի ուշադրության կենտրոնում, կմեծանա պատասխանատու անհատ, սովորելը կդառնա ձգտելի և արդյունավետ:

Եվ ընդհանրապես, ես դեմ չեմ քննադատությանը, թերությունների վերհանմանն ու շտկմանը, բայց չեմ կամակերպվում, կմեծանա պատասխանատու անհատ, սովորելը կդառնա ձգտելի և արդյունավետ: Եվ ընդհանրապես, ես դեմ չեմ քննադատությանը, թերությունների վերհանմանն ու շտկմանը, բայց չեմ կամակերպվում, կմեծանա պատասխանատու անհատ, սովորելը կդառնա ձգտելի և արդյունավետ:

Հասմիկ ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վաղարշապատի հ. 10
ավագ դպրոցի ուսուցիչ





Գրականագիտական

Ցնորական Տերյանը

սկիզբը՝ «Կրթություն» հ. 47

Այն, ինչ չհասցրեց անել Տերյանը, արեց Չարենցը: Նա եկավ տերյանական աշխարհից, մտավ հեղափոխական տարերքի մեջ, գրեց «Սոմա», «Ամբողները խելագարված» պոեմները, «Ողջակիզվող կրակ» շարքը, հետո դրանց ավելացրեց այլևայլ գործեր եւ հռչակվեց հեղափոխության բանաստեղծ: Ոգեւորության ալիքը բարձրացավ մինչեւ 1924 թվականը, հետո եկավ խաղաղ տեղատվությունը՝ մինչեւ «Եպիթեզիան լուսաբաց» (1930), իսկ դրանից հետո Չարենցը արդեն բացահայտ ընդդիմություն էր, ընդ որում՝ ոչ թե միայնակ, այլ իր գրական խմբակով (Բակունց, Մահարի, Արմեն):

Եթե Տերյանն ապրեր, նա եւս դառնալու էր ընդդիմություն, հռչակվելու էր ժողովրդի թշնամի եւ կամ գնդակահարվելու էր, կամ անհիշատակ կորչելու էր արտարվայրերում: Սա է նրանց քաղաքական գծի ընդհանրությունը: Հիմա անդրադառնամ մարդկային խառնվածքի եւ ստեղծագործական նկարագրի յուրահատկություններին:

Տերյանը խաղաղ նկարագիր էր, ձգտում էր խոսքի մեղմության, հանդարտ ներգործության: Չարենցը պայթուցիկ էր. նրա խոսքի ուժակնությունը՝ էներգետիկան, շատ հզոր է: Նրանը ծայրահեղ սահմանն էր խելագարություն, հրդեհ, զոհ, փոթորիկ, ուրագան...

Բոլոր բանաստեղծներն էլ ունեն իրենց անհատականության խորագույն գիտակցումը, իրենց նշանակության արժեքը: Չարենցը ինքն իրեն համարում էր իր ժողովրդի խորհրդանշաններից մեկը, ինչպես Արարատը, «Սասնա ծռեր» ոլորտագրությունը, Ջվարթնոցը, մայրաքաղաք Անին, Մաշտոցը, Կարդան Մամիկոնյանը, Խորենացին, Նարեկացին, այդտեղից էլ իր անձի նշանակության շեշտադրումը բազմաթիվ պոեմներում ու բանաստեղծություններում: Այսինքն՝ իրենով Չարենցը ոչ թե իր անձն է մեծարում, այլ հայ ժողովրդի արժանացումը, բարձրացումը, զարգացումը, համաշխարհային քաղաքակրթության ոսկի երակը լինելու իրողությունը, հայոց հանձարի վառվող ուժը, մեծությունն ու ներկայանալիությունը:

Սա գրականության մեջ ընդունված գեղարվեստական հնար է, որ կիրառել են շատերը: Օրինակ, ամերիկյան գրականության հսկաներից Ուոլթ Ուիթմենն իր «Ինքներգանք» պոեմում իրենով փառաբանում է իր երկիր Ամերիկան:

Այս տեսակետից տարբեր են նաեւ Տերյանի ու Չարենցի հրաժեշտի խոսքերն աշխարհին: Տերյանի բանաստեղծությունը հիշեցիք: Իր մահվան գիտակցումն ուներ նաեւ Չարենցը: Նշանակում է երկունս էլ ապրել են կյանքին վաղաժամ հրաժեշտ տալու ողբերգությունը (միջանկյալ կարող ենք հիշել Դուրյանին ու Մեծարենցին): Իսկ այդ հարժեշտը յուրաքանչյուրի հոգում տարբեր էր. Տերյանն աննկատ մահ էր երագուցում (մահն էլ կերպագուցում) ոչ ծաղիկ, ոչ խոսք, ոչ արցունք, լուրջում միմիայն: Չարենցն իր մահվամբ տեսնում էր մի ամբողջ քաղաքակրթության կործանումը: «Անվերնագիր» (15. XII. 1936) բանաստեղծությունն ավարտվում է այս տողով.

Այն, որ ես էի, որ իմն էր առաջ, Արդեն չի հառնի եւ ոչ մի գրքով, Եվ ոչ մի գրքով՝ աշխարհում գրած, Եվ ոչ մի գրքով, եւ ոչ մի գրքով... Սրանից չորս օր առաջ (11.12.1936 թ.) իր մահը տեսել էր նաեւ այսպես.

Այլեւս ինչ մնաց թեզ՝ խնդրելու կյանքից,- Օ՛, անհանգիստ իմ սիրտ ու անկարող... Ա՛խ, խոնջեցի միայն անեզրական կարոտ,- Խաղաղություն անխոհ,- մահվան հանգիստ... Չարենցի անձի պատմական նշանակու-

թյան գիտակցման վերաբերյալ Չեր հիշածներին ավելացնեն եւս մի քանի տող «Նահիրի երկրից» (1920 թ.) պոեմից.

Ուղբերս ամուր հողի մեջ մխած, Գլուխս աստղերում, Անասան, հաստատ կանգնած հողմային

Օրերի հրում - Իմ հավերժառես, պայծառ աչքերով Նայում եմ հեռուն: <...> Ե՛ս- ե՛ս եմ նորից.- Դարերից եկած անհուն մի պոետ - եղիշե Չարենց- Նահիրի՛ երկիր, քո երգիչը վառ, Օրհներգուն, պայծառ Ու զավակը մեծ... Ե՛ս - ե՛ս եմ նորից.- Ոսկի երակը հնամյա ցեղիս, Իմ ջլաբազուկ, հաղթ ժողովրդի Օղակը վերջին:

Սա Չարենցի կողմից անմահության ընկալումն է, որպես առավատչյալ աչքի առջև ունենալով երկիր Նահիրին:

Իսկ ի՞նչ է անմահությունը: Անմահությունն սկսվում է յուրաքանչյուրից եւ սերունդների հիշողությամբ խորանում դեպի անցյալը՝ իրենից անմիջապես առաջ ծնողները, պապերը, ապուպապերը, նախնիները: Նույն կերպ միտքը շարժվում է իրենից հետո՝ զավակները, թոռները, ծոռները, կոռները...

Անմահությունը եւ՛ նյութական է, եւ՛ գիտակցական: Նյութական՝ արյան եւ սաղմնային (գենետիկ) հատկանիշների շարունակականությամբ: Գիտակցական՝ իրենից առաջ պատմությունն է, համաշխարհային քաղաքակրթության անցած ճանապարհը, իր ժամանակ՝ ստեղծվող կյանքը, իրենից հետո՝ շարունակվող կյանքը, որի ընթացքի տրամաբանությունը տեսնում է, կանխատեսում, գուշակում ու կռահում: Պայծառատեսները տեսնում են ապագան: Անմահությունը նաեւ հոգեւոր հասկացություն է: Անմահությանը պետք է հավատալ հենց այնպես, ինչպես հավատում են Աստծուն: Աստված անմահ է եւ հավերժական: Այդ անմահությունն ու հավերժությունը պայմանավորված է սերունդների հավաքական հիշողությամբ: Ուրեմն սերունդների հերթականությամբ ու հաջորդականությամբ անմահ է նաեւ մարդը:

Մարդը շրջապատված է բնության հավերժությամբ՝ երկիր, Արեգակ, Լուսին, ցամաքներն ու օվկիանոսներ: Հայ ժողովրդի համար հավերժության խորհրդանշան է Արարատը՝ որպես սուրբ սար, ետջրհեղեղյան աշխարհաստեղծման խորհրդանիշ: Այստեղից հայ բանաստեղծների, նաեւ Չարենցի հաճախակի դիմումը Արարատին: Արարատին միվրված բանաստեղծություն ունի նաեւ Տերյանը:

Մարդկությունը փորձել է նաեւ մրցակցել բնության հետ՝ ստեղծելով հավերժության իր պատկերացումը մարմնավորող կառույցներ՝ բուրգեր, Թաջ Մահալը, Սֆինքսի արձանը: Մարդկությունը հավերժության հետ մրցակցել է նաեւ մտավոր այնպիսի բարձրագույն արժեքով, որպիսին Աստվածաշունչն է եւ այն ամենը, ինչ ամբարված է սեպագրերում, պատկերագրերում, մեդալոններում, արձանագրություններում, բանավոր հիշողության մեջ եւ գրքերում:

Սկսած Չարենցի իրենով այս անմահությունն ու հավերժությունն է խորհրդանշանում եւ արելու, գոյատևելու երաշխիք տալիս 1915 թիվ եւ հետագա իրադարձություններ տեսած իր հիրավի բազմաշարքար ու մագապուրծ ժողովրդին:

Այնպես որ, նորից եմ կրկնում, պետք է ոչ թե գործերին, այս դեպքում Տերյանին ու Չարենցին հակադրել, այլ բացատրել նրանց առանձնահատկությունները: Եվ սա պետք է ընդհանուր ու միանշանակ սկզբունք լինի մարդաճանաչողության, արվեստի աշխարհի ներկայացուցիչներին գնա-

հատելու հարցում:

Այսքանից հետո Չեր իսկ հարցադրմանը պատասխանեմ Տերյանի եւ Չարենցի հոգեւոր ուղղվածությունները տարբեր չեն, մեկը մյուսի շարունակությունն են: Տերյանը շարունակվեց, իր վերջին բանաստեղծություններով եկավ այնտեղ, որտեղ արդեն Չարենցն էր: Չարենցի շարունակությունն ու ավարտը նույնությամբ կարող էր կրկնել նաեւ Տերյանը: Ինչո՞ւ: Որովհետեւ պատմաքաղաքական ժամանակի առջեւ նրանք կանգնած էին նույն, գրեթե միեւնույն դիրքորոշմամբ: Սա արդեն իսկ բացառում է «միմյանց հակադիր» սխալ ձեւակերպումը:

Չարենցը որքան «կյանքի, երկրային ձգտումների մարդ էր» եւ կարծում էր, որ կարելի է ստեղծել նոր հասարակարգ, այդ դիրքերից նաեւ բարեբանում էր նոր հասարակարգը ստեղծող գործիչներին, ինքն էլ կյանքի պայքարի մեջ անտարբեր չէր եւ ամեն կերպ փորձում էր հաստատել իր գրական սկզբունքները, իր գրական բարձր սկզբունքներն ընդդեմ պարզունակամտների ու սխեմատիկների, բայց այդ պայքարը նրա համար դարձավ արյունոտ գրապայքար: Սա այս ամենով հանդերձ՝ Չարենցը նաեւ հոգեւոր բարձրագույն հաղորդակցման բանաստեղծ էր՝ ավելի խորացած 1935-1937 թթ. ստեղծագործությունների մեջ, որոնց բացառիկ արտահայտություններ են «Վերջին աղոթք», «Իմ լեռան աղոթք», «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծո՛» տետրապոլիթոսը, «Նավգիկե» պոեմը, «Բալլադ սիրո» բանաստեղծությունը, «Եկ լեզիստես»-ը՝ իր «Գիրք ժողովրդի»-նը...

Չարենցը բանաստեղծ էր ինչպես մեծ առօրյայի, հարաշարժ կյանքի, պատմության ու ժամանակի, նույնքան եւ ավելի՝ հավիտենության: Երկու արժեք սեր եւ հայրենիք, սիրո եւ հայրենիքի առջեւ կանգնած մարդ ու բանաստեղծ է բարձր պոետ: Ի՞նչ է սա, եթե ոչ հավիտենության ազդականչ: Այդ ազդականչը ժամանակների միջով ապագային, գալիքին, այսինքն հավիտենությանն են փոխանցում ինչպես Տերյանը, այնպես եւ Չարենցը:

Տերյան-Չարենց կապի մասին երկար կարելի է խոսել: Տերյանը նկատել է Չարենցին եւ առանձնացրել ժամանակի գրական հորձանքի մեջ: Չարենցը Թիֆլիսի «Մի բաժակ թեյ» սրճարանում տեսել է Տերյանին եւ դռան արանքից ակնածանքով երկար նայել նրան: Առաջին իսկ դրամանը միջոցներով դարձրեց Չարենցը գնել է Տերյանի բանաստեղծությունների ժողովածուն: Ստեղծագործել է նրա բարերար ազդեցությամբ: Ինքն իսկ իր ստեղծագործության առաջին շրջանը համարել է տերյանական: Հետո «Երեքի» դեկլարացիայով եւ այն կենսագործող գրքերով ընտրեց նոր խոսքի ճանապարհը, անգամ ժամանակի գրական բարձրի սովորույթով մի պահ ընդվզեց Տերյանի դեմ, բայց հետո «Վերադարձի, օ, վերադարձի» կանչեց, մեծաբեց ու փառաբանեց, ապրեց նրա հետ իր մնացած գրական կյանքը: Ամենուր Տերյանն էր խոսքի մեջ, բանաստեղծության մեջ, հրատարակչական ծրագրերի մեջ: րական թանգարանից իր տուն տարավ Տերյանի անտիպները, սրբազան դոկով արտագրեց դրանք, որպեսզի ամեն մի ձեռք տալիս Տերյանի թղթերը չտրորվեն, օրագրային շատ թանկ գրառումներ արեց նրա մասին, ուզեց հրատարակել Տերյանի երկհատորյակը, բայց չհասցրեց: Արտագրածի ինքնագրերն անհայտացան, իսկ որպես Տերյանի ժառանգության վկայություններ մնացին իր արտագրությունները: Չարենցն իր հերթին արեց Կապույտ աղջկա գովքը, հետո այդ աղջիկը նրա համար դարձավ Կարմիր ամազոնուհի: Չարենցն ապրեց տերյանական աշնան թախիծը, արցունքն աչքերին «Տաղ անձնական» ու «Հեռացումի խոսքեր» հյուսեց: Բայց հետո, երբ օրերը քաղաքական բովանդակություն ստացան եւ բացվեց երկրում մոլեգնող քաղա-



քական հողմաշունչ աշնան ցուրտ առավոտը, Տերյանի աշունը Չարենցի պատկերացումների մեջ դարձավ մահաշունչ ու կործանարար՝ «Վերադարձած աշուն», «Աշնան երգ», «Այս աշունը այնպես անցավ», «Աշունը, ա՛խ, այնպես անցավ», «Նույն երգն է կրկնում աշունը», «Ցուրտ է, աշուն է...», «Շաչում է այս աշնան քամին...»: Սա եւ առանձին տողեր չարենցյան այդ շարքից.

Այս աշունը այնպես անցավ, Այս աշունը մթին էր, ինպես երագուն զառանցած հանցանք...

Աշունը, ա՛խ, այնպես անցավ՝ Եվ ցնցող, եւ ծանր, ինչպես Հանձարեղ ոճիր կամ հանցանք:

Շաչում է աշնան քամին, իբրեւ հին, դասական Ավվիլուն. Աշուն է, եւ ծանր անձրեւի արձիճե շեղջեր քշելով, Եվ ավերք, եւ նեռ գուժելով թռչում է հողմն Ավվիլուն:-

Սա այսպես, 1936 թվականի քաղաքական աշունը նրա համար դառնում է մայրամուտ եւ վերածվում մայրամուտի երգերի, որոնցում գլխավոր բառը Մահն է: Իսկ Ավվիլունը հյուսիսային սառը քամին է, այն հյուսիսի, որտեղից ընդամենը մի քանի տարի առաջ հեղափոխության տաք գուրջին էր բարձրանում:

Պահպանելով իր հուժկու գրական անհատականությունը՝ Չարենցը կարող էր միաժամանակ վերափոխվել ու դառնալ խաչատուր Արուսյան («Դեպի լյառը Մասիս»), կարող էր դառնալ Կոմիտաս («Կոմիտասի հիշատակին», «Կոմիտաս»), կարող էր դառնալ Աղասի Խանջյան («Դոֆինը մայրական» հնչյակների շարքը), կարող էր դառնալ նաեւ Տերյան: Սկսած 1937-ին գրած երկու բանաստեղծության առաջին տները.

Միշտ, երբ կարդում եմ Տերյանը,- Դարսն է հիշում իմ հոգին: Իմ մանկությունն ու այգին հին,- իմ հայրենիքն ու մայրիկս... Լաց է լինում մեղմ, հոգին իմ,- դարձն է տոնում մորմոքի,- Դարսն էմ հիշում հեռավոր,- միշտ, երբ կարդում եմ Տերյանը...

Ա՛խ, կարծես նստած ես դռանը եւ ինձ հետ Տերյան ես կարդում... Շարքն ես կարդում մայրիկս՝ մայրիկս խոսքերի գանձարանը... Օ՛, սիրում էիք մե՞նք նրան, ինչպես հույսն են սիրում ապարդյուն,- Եվ... Տերյան էիր դու կարդում միշտ հետս նստած մեր դռանը:

շարունակությունը՝ էջ 10

Փոճիր մտապահել

սկիզբը՝ «Կրթություն», թիվ 48

114) Իմարեսիոնիզմ

Իմարեսիոնիզմ բառը ֆրանսերեն ծագում ունի և նշանակում է «տպավորություն»: Դա 19-րդ դարի վերջում -20-րդ դարի սկզբում ծնունդ առած արվեստի ուղղություն է: Իմարեսիոնիզմի ներկայացուցիչները (Է. Դեգա, Է. Մանե, Կ. Մոնե, Կ. Պիսարո, Օ. Ռենուար և այլք) ծագում էին «բռնել» շրջակա աշխարհի փոփոխականությունը, փոխանցել սեփական ակնբարձրային տպավորությունները: Իրենց ստեղծագործություններում նրանք արտահայտում էին առօրյա կյանքի անմիջական ընկալումը՝ պատկերելով, կարծես թե, պատահականորեն տեսած տեսարաններ, ստեղծելով թվացյալ անկայուն կոմպոզիցիաներ, ընտրելով անսպասելի տեսարաններ ու ռակուրսներ: Իմարեսիոնիստների գեղանկարչությունը տալիս է վառ արեգակնային լույսի, փոփոխվող լուսավորվածության և շարժվող օդի տպավորություն, որոնցում անհետանում են առարկաների ուրվագծերը: Աշխատանքը «բաց օդում» և գույնի դերի վերաիմաստավորումը իմարեսիոնիստ-նկարիչներին թույլ տվեցին ստեղծել նոր կոլորիտային համակարգ: (Կոլորիտը արվեստի գործում գույների համադրությունն է, ինչը գեղանկարչությունում և գունավոր գրաֆիկայում կարեւորագույն արտահայտչամիջոց է: Կարող է լինել սառը (կապույտ, կանաչ, մանուշակագույն) կամ տաք (կարմիր, դեղին, նարնջագույնի գերակշռությամբ), համգիստ կամ լարված, լուսավոր կամ մութ, պայծառ, զուսպ և այլն): Իմարեսիոնիստները հրաժարվեցին խառնված գույներից և սկսեցին նկարել սպեկտրի մաքուր գույներով, դրանք կտավին փոխանցելով առանձին վրձնահարվածներով:



Իմարեսիոնիստները, հենվելով ֆիզիկայի օրենքների վրա, հայտարարում էին, որ ոչ մի առարկա կոնկրետ գույն չունի: Այդ գույները փոխվում են օրվա յուրաքանչյուր ժամի նայած թե անկման ինչ անկյուն ունեն արեւի ճառագայթները: Քրե արելը զենիթում է, ամեն գույն փայլատակում է իր ողջ պայծառությամբ: Մայրամուտին գույները խամրում են, ավելի մուգ երանգներ ստանում: Իմարեսիոնիստները նույնիսկ ստվերի մեջ էին լույս տեսնում, միայն թե այլ որակի և ուժի: Իսկ Մանեն սեւ գույնն օգտագործում էր՝ մյուս երանգներն ընդգծելու համար: Իմարեսիոնիզմը իր արտահայտությունը գտավ նաեւ քանդակագործության, երաժշտության, գրականության մեջ:

...Նկարում՝ Օ. Ռենուար, արտիստուհի ժաննա Սամարի դիմանկարը: Դիմանկարի փայլուն վարպետ Ռենուարը ստեղծել է կանացի հրաշալի կերպարների մի ողջ պատկերասրահ:

115) Համաստեղություն

«Իսկ իրականում դու հենց Փյունիկի համաստեղության աստղն ես լուսատու, մեռնող ու հանող, միշտ բոցավառվող... Մաշկի պես ձուլված հոգու քարտեզին՝ դու խաչելություն ու ծակատագիր, Աստված ու աղոթք, դու սրտեր սնող փորոք ես երկճյուղ՝ Հայաստան-Արցախ:»

Լեւոն Անանյան

Համաստեղությունները երկնախորտը պայմանականորեն բաժանող տիրույթներ են՝ աստղային երկնքում հեշտ կողմնորոշվելու համար: Իրականում, իրարից փոքր անկյունային հեռավորության վրա գտնվող աստղերը եռաչափ տարածության մեջ կարող են դասավորված լինել իրարից շատ հեռու: Մի համաստեղության մեջ երեւացող աստղերը կարող են եւ ֆիզիկորեն կապված լինել, եւ ոչ մի կապ չունենալ:

Նկարագրենք Բեւեռային աստղով կողմնորոշումը: Այդ աստղը միշտ գտնվում է հյուսիսում: Որպեսզի այն գտնենք, նախ պետք է գտնենք Մեծ Արջի համաստեղությունը, որ հիշեցնում է յոթ բավական պայծառ աստղերից բաղկացած շերտի: Այնուհետեւ՝ պետք է Մեծ Արջի աջ եզրային երկու

Բանաստեղծներն են հուշում

աստղերով մտովի տանել գիծ, նրա վրա տեղադրել այդ աստղերի միջեւ եղած հեռավորությունը հինգ անգամ գերազանցող հատված, որի ծայրակետը կլինի Բեւեռային աստղը: Այդ աստղը մի ուրիշ շերտի՝ Փոքր Արջ համաստեղության պոչի վրա է: Դեմքով կանգնելով դեպի Բեւեռային աստղը՝ կորոշենք հորիզոնի կողմերը:

Համաստեղությունների անվանումների հետ հաճախ կապված են գեղեցիկ առասպելներ, որոնցից մեկը վերապատմենք այստեղ:

Հյուսիսային երկնքի զարդը Օրիոնի համաստեղությունն է, որը կարելի է տեսնել՝ սկսած նոյեմբերից ու ողջ ձմռանը: Օրիոնը որսորդ է, այդ պատճառով էլ նրան երկնքում ուղեկցում են Մեծ Շունը և Փոքր Շունը: Կողքին է նաև Նապաստակը: Լեգենդներից մեկի համաձայն Օրիոնը ծովերի աստված Պոսեյդոնի որդին է, հզոր մի հսկա, որը սպանում է անխտիր բոլոր գազաններին: Դրա համար էլ Արտեմիդա աստվածուհին, որ կենդանիների հովանավորն էր, սպանում է կրքոտ որսորդին՝ նրա մոտ ուղարկելով Կարիծին: Երկնքում այդ համաստեղությունները կարծես պահնտոցի են խաղում, հենց երևում է Կարիծը՝ Օրիոնը թաքցնելով է հորիզոնում՝ երկնքի հակադիր կողմում: Օրիոնի ամենապայծառ աստղը Ռիգելն է՝ կապտասպիտակավուն աստղ, մյուս պայծառը՝ կարմիր Բետելգեյզեն: Մեծ Արջի ալֆան հոյակապ Սիրիուսն է, որին մշտապես ուղեկցում են Որսկան շները:



...Նկարում՝ Օրիոն համաստեղությունը, որ հայերը կոչել են Հայկ Նահապետի անունով:

Ըստ անգլիացի աստղագիտության պատմության նշանավոր գիտնական Օլքոտի՝ «Համաստեղությունների հնագույն պատկերանշանների ստեղծողները, հավանաբար, ապրել են Եփրատի հովտում, ինչպես նաև Արարատ լեռան շրջանում»:


116) Ռոբոտ

Ռոբոտը կարելի է սահմանել այսպես. «խելացի գործակալ», որն ընկալում է իր շրջակայքը և իրականացնում համարժեք ճանաչողական, «ստեղծագործական» գործողություններ, ինչը մարդիկ սովորաբար նույնացնում են խելքի, բանականության հետ: Այդպիսի խնդիրներ են մարդկային խոսքի ճանաչումը, պատկերների տարբերակումը, ինքնավար գործողությունները, ռազմական սիմուլյացիաները և այլն: Ռոբոտն իր ընկալումը կառուցում է սենսորներից եկող ազդանշանները վերլուծելով, օրինակ՝ էլեկտրամագնիսական ճառագայթներ, ձայն, շոշափման արդյունքում ձեռք բերված տվյալներ և այլն: Այսինքն՝ նրանց գործն է իրական աշխարհից բազմաչափ տվյալների գրանցումը, դրանց թվայնացումը, լուծումներ գտնելը: Ժամանակակից ռոբոտն, օրինակ, կարող է որոշել իր գտնվելու վայրը և քարտեզագրել այն, աշխատել նույնիսկ շարժուն միջավայրերում, ինչպես հիվանդի օրգանի ներսն է:

Առայժմ ռոբոտների «նեյրոնների» քանակն ավելի չէ, քան մեղուներինը (նեյրոնը նյարդային համակարգի նեղ մասնագիտացված բջիջն է, նրա կառուցվածքային – ֆունկցիոնալ միավորը, որն իրականացնում է ազդանշանների փոխանցման գործառնություն): Ապագայում, իհարկե, պատկերը կփոխվի: Դա կլինի, եթե արհեստական ինտելեկտի նեյրոնային ցանցերը ներառեն, պայմանականորեն ասած, 100 միլիարդից ավելի նեյրոն, այսինքն՝ ավելի շատ, քան մարդու մոտ է: Այս դեպքում դրանք կարող են արհեստական ինտելեկտի նոր մոդելներ ստեղծել՝ ավելի հաջող կերպով, քան իրենց ստեղծող մարդը:

Շատ քննարկվող հարց. արդյոք վերահսկողությունից դուրս չի գա ռոբոտի գործողությունը: Դրա լուծման եղանակներից մեկը կարող է լինել հետեւյալը: Վաղ թե ուշ, կհայտնվի ինտերֆեյս (դա երկու առանձին համակարգերի

«ընդհանուր սահմանագիծն» է, որի միջոցով նրանք փոխազդում են, օրինակ՝ ուղեղի էլեկտրական ակտիվության կառավարմամբ՝ մարդու ուղեղի և արհեստական նեյրոնների միջեւ, որը թույլ կտա կառավարել տեխնոլոգիան: Եթե մարդկությունը գտնի վայրկյանում առանց վիրաբուժական միջամտության առանձին



նեյրոնի ճշտությամբ կարողալու և ուղեղի տվյալներն առանց սխալի գրանցելու եղանակը, ապա հնարավոր կլինի ոչ միայն վերահսկելու արհեստական ինտելեկտը, այլև դրա հետ ներդաշնակ գործելու՝ ընդունելով տեխնոլոգիական առաջընթացի նոր մարտահրավերները:

... Նկարում՝ ռոբոտ, կադր մի մուլտֆիլմից:

117) Լեռներ

«Ախ ինչքան, ինչքան կարոտել եմ ձեզ, Սիզապան՝ լեռներ հայոց աշխարհի, վազել եմ, հոգնել ձեր լանջերում ես, Իմ լեռներ, լեռներ, լեռներ հայրենի:»

Ավետիք Իսահակյան

«Լեռներ՝, լեռներ՝ հայրենի, անմահական դըշխոներ՝ Ռոբոնց արփին կը դնէ թագ եւ մըշուշն ալ պատմուծան.

Լեռներ, սառէ ծոցերով, գըլուխներով ձիւնաւեր՝ Չոր կօծանէ լուսնկան:»


Դանիել Վարուժան

«Լեռներից լավը կարող են միայն լեռները լինել, Ռոբոնց վրա ես դեռ չեմ եղել. Ռոբոնց վրա՝ ո՛չ որ չի եղել:»

Վ. Վիսցկի

Լեռը բարձրություն է, որ շրջապատի հարթությունից մեկուսացած է և որը տարածության վրա ամփոփված, պարզորոշ կերպով երևում են ստորոտը, լանջն ու գագաթը: Սովորաբար, ունենում են 200մ–ից ավելի հարաբերական բարձրություն (ավելի ցածրերը բլուր են կոչվում): Լեռները մեկ ուղղությամբ դասավորված առաջացնում են լեռնաշղթա, ձգվում են հարյուրավոր և նույնիսկ հազարավոր կմ: Նրանց բարձրությունը հասնում է հազարավոր մետրերի:

Լեռների քիչ թե շատ մեկուսացված հատվածները, որոնք հարեւան շրջաններից անջատվում են խորը հովիտներով, կոչվում են լեռնազանգվածներ: Դրանք հոծ են, քիչ մասնատված, լայնությունն ու երկարությունը միմյանցից շատ չեն տարբերվում, օրինակ՝ Չեխական զանգվածը:



Հարունակությունը՝ էջ 9

Բանաստեղծներն են հուշում

սկզբը՝ էջ 8

Լեռնաշղթաների եւ սարահարթերի հսկայական կուտակումներին էլ լեռնաշխարհ են անվանում, օրինակ՝ Հայկական լեռնաշխարհ, Ալթայ, Պամիր, Տյան-Շան, Տիբեթ եւ այլն: Հնդկականության համար օգտագործում են լեռնաշղթաների անենացածր թամբոցները՝ լեռնանցքները:

Դրանց բարձրությունը կախված է լեռնաշղթաների բարձրությունից: Ուրալում դա հասնում է 400մ, Ալպերում՝ 1300-2800մ, Կովկասում՝ 2400-3000մ, Հիմալայներում մինչեւ 5500 մ:

Լեռներն առաջանում են երկրի կեղեւի տեկտոնական շարժումներից եւ դասակարգվում են հետեւյալ խմբերի.

1. ծալքավոր լեռներ, որոնք կազմված են գլխավորապես ծալքերից (օր.՝ Յուրալ),
2. ծածկույթային, բաղկացած են գլխավորապես պառկած ծալքերից ու ծածկույթային վրաշարժերից (օր.՝ Ալպերը),
3. խզումնա-ծալքավոր լեռներ բեկվածքների գերակշռությամբ, որոնք առաջացնում են առանձին ծալքավոր բեկորներ, ընդ որում ծալքերը կտրվել են նրանց գոյացման ժամանակ (օր.՝ Միջին Գերմանական լեռները),
4. բեկորավոր լեռներ, առաջացել են միայն խզումներից (Աֆրիկայի լեռների մեծ մասը),
5. ծալքա-բեկորավոր լեռներ, որի կազմավորման գործում մասնակցել են ինչպես ծալքավորման պրոցեսները, այնպես էլ ուղղաձիգ շարժումները: Ծալքավոր հիմքի վայրենտված մասում առաջանում են իջվածքներ, վերնետված մասերում՝ լեռնաշղթաներ ու լեռնազանգվածներ: Այդպիսի ծագում ունի Հայկական լեռնաշխարհը:

Երկրագնդի վրա ամենաբարձր լեռնագագաթը Ջոնո-լունգման է (8848մ), իսկ արեգակնային համակարգի վրա՝ Մարսի Օլիմպոսը, որը շուրջ երեք անգամ ավելի բարձր է, քան Ջոնոլունգման ու երկու անգամ էլ գերազանցում է Վեներայի լեռները: Օլիմպոսի լայնությունը երեք անգամ գերազանցում է նրա բարձրությանը, ու եթե դիտորդը նույնիսկ կանգնի հրաբխի գագաթին, նրա ստորտը կանցնի հորիզոնից ու նա ոչ մի կերպ չի տեսնի հրաբուխն ամբողջությամբ:

Ո՞րն է Օլիմպոսի նման վիթխարիության պատճառը: Լեռան մեծ չափերը բացատրում են նրանով, որ մոլորակի չունի տեկտոնական սալեր, ինչպես երկրի դեպքում է: Սալերի շարժման են էրոզիայի բացակայության դեպքում հրաբուխը կարող է գործել երկար ժամանակ: Իսկ բարձրությունը՝ Մարսի ավելի փոքր գրավիտացիա ունենալու շնորհիվ է հնարավոր: Երկրի վրա նման բարձրությունների լեռնագոյացություններ չեն կարող լինել՝ կծղվելն սեփական գրավիտացիայից:

...Նկարում՝ աշխարհի ամենաբարձր լեռնագագաթը՝ Էվերեստ (Ջոնոլունգման):



... Ասում են՝ հնում Ատլանտիդա անունով մի քաղաք է եղել, որ հետո անցել է ջրի տակ: Ըստ լեգենդի՝ Ատլանտիդան կախված էր հատուկ էներգիա ունեցող բյուրեղներից, որոնք մեծ ու մահացու էներգիա էին արձակում: Դրանք նաեւ ուժեղ ձգողականություն ունեին, ինչի արդյունքում նավեր ու ինքնաթիռներ են կործանվում: Կամ էլ՝ զուցե քաղաքը նոր բնակիչներ է հավաքում: Ասում են նաեւ, որ Քրիստիափոր Կոլումբոսը, երբ հասնում է «Նոր աշխարհ», մի գիշեր մի մեծ հրե գունդ է տեսնում, որը ընկնում է օվկիանոսի մեջ ու մի քանի օր անց տարօրինակ լույս է հայտնվում հեռվում: Իբր թե՛ ճանապարհորդը նկարագրել է Բերմուդյան կամ Սատանայի եռանկյան առաջացումը... Դա մի եռանկյունաձեւ շրջան է Սարգասյան ծովում, որի գագաթներն են Մայամին, Սան-Խուանը՝ Պուերտո-Ռիկոյում ու Բերմուդյան կղզիները: Շատ տարօրինակ պատմություններ կան այս շրջանի հետ կապված ու հեքիաթն ու իրականը խառնվում են իրար: Ինչ վարկած ասես, որ առաջ չի քաշվել: Էլ արտերկրային այցելուների ձեռքի գործեր, էլ խոռոչների միջով ճանապարհորդություն ժամանակի մեջ... Գիտական բացատրության փորձեր էլ կան: Օրինակ ծովի ընդերքում ընթանում է մեթանի հիդրատի տրոհում, որի արդյունքում ջրում առաջանում են մեթանով հագեցած պղպաղակներ, որոնցում խտությունն այնքան փոքր է, որ նավերը չեն կարող մնալ մակերեսային ու ակնթարթորեն սուզվում են: Օր բարձրանալով մեթանը կարող է նաեւ ինքնաթիռներ խորտակել, որովհետեւ փոքրանում է վերամբարձ ուժը եւ աղավաղվում են սարքերի ցուցմունքները: Աղետի պատճառ կարող էին լինել նաեւ 30մ բարձրություն ունեցող թափառող ալիքները կամ ծովում գեներացվող ինֆրաձայները: Վերջինս կարող է խուճապ ու հալուցիանցիաներ առաջացնել... «Բերմուդյան եռանկյունի» բառակապակցությունը առաջին անգամ օգտագործել է գրող Վինսենտ Գալիսը 1964թ.-ին՝ հրապարակելով «Մահացու եռանկյունի» հոդվածը:

...Նկարում՝ Զենրիկ Մայանի «Եռանկյունի» ֆիլմի ազդագիրը (սցենարը՝ Ադասի Այվազյանի):

119) Արիեստ

«Մայրս ինձ ասաց, արիեստի գնա, արիեստ սովորի, մի լինի նազուկ, արիեստն է մարդու ոսկե բիլազուկ»:
Հովհաննես Շիրազ

«Բրուտի քարանձավը երկու մասից է՝ առաջինն ավելի ցածր, երկրորդը՝ բեմի չափ բարձր: Առաջին մասում չարիսն է, ջրի կուժը եւ կավե ցեխը. երկրորդ մասում բերանի վրա շարված են դեռ չթրծված կծեր, կուլաներ, զավաթներ եւ դարակներ:

... Բրուտը, կարծես ուրախացած մեր ներկայությունից, ավելի արագ էր շարժում ձեռքերը: Նրա ոսկրոտ մատների արանքից լարծուն կավը հոսում է անընդմեջ, ապա մատները գրկում են կավե սյունը: Դառնում է չարիսը, ձգվում է կավե սյունը, բարակում, ապա նստում է նրա բռունցքի տակ: Այս անգամ ձեռքը թաթախում է կավաջրի մեջ եւ կոխում կավե գնդի մեջ: Անորոշ է ձեռք, բայց ձեռքերը այդ հարափոփոխ զանգվածին կերպարանք են տալիս:

... ճղվում է կավը. կարծես ճահճուտում բաղ է կռնչում: Թռչում են ցեխաջրի շիթերը: Արդեն չարիսի վրա ֆռում է կծի նման մի բան: Ոսկրոտ մատները սեղմում են վիզը եւ հլու կավը ձգվում է, բարակում է կծի վիզը: Մնաց ունկը չինք եւ ոսկրով նախշի կողերը»:

Ալսել Բակունց, «Բրուտի տղան»

Արիեստը որոշակի հմտություններ պահանջող ու ձեռքի պարզ գործիքներով կատարվող աշխատանքն է ու այդպիսի աշխատանքի հմտությունը:

Արդեն հին աշխարհում մարդիկ կային, ովքեր զբաղված էին հայտնի նյութերի մշակումով: Այդ մասին վկայություններ է թողել Հոմերոսը: Հին հույները դա անպատվաբեր աշխատանք էին համարում, դա հիմնականում ստրուկ-

ների գործն էր: Բայց արիեստները Հունաստանում (նաեւ՝ Հռոմում, Արեւելքի երկրներում) անհրաժեշտաբար զարգացում ապրեցին՝ պերճանքի, առաջին անհրաժեշտության ապրանքներ արտադրելու համար, ու աշխատանքի բաժանումն ըստ ոլորտային արիեստների իրականություն դարձավ: Պատվերով արիեստն ու շուկան արիեստավորներին պատվաբեր մարդիկ դարձրին: Քաղաքների զարգացումը որպես արիեստագործական – առետրային կենտրոնների՝ նրանց աշխատանքով էր պայմանավորված: Միջնադարյան եվրոպայում արիեստավորները քաղաքներում առանձին թաղամասեր էին զբաղեցնում: Արդյունաբերական հեղաշրջումը (18-րդ դարի կեսեր) սահմանափակեց նրանց գործունեության ոլորտները, բայց լավ արիեստավորի պահանջարկը մնաց. նրանք կատարում էին անհատական պատվերներ կամ պատրաստում թանկարժեք զեղարվեստական գործեր: Իսկ թույլ զարգացած երկրներում արիեստը փաստորեն սպասարկում էր ողջ տնտեսությունը՝ դարբնություն, հյուսնություն, դերձակություն, բրուտագործություն, կոշկակարություն, հացթուխություն եւ այլն: Հին հայաստանում եւս արիեստը հասել էր բարձր մակարդակի: Ոսկերչության կենտրոններ էին Դվինը, Անին, Կարսը, Շուշին, Արդվինը եւ այլն, որոնց վարպետների նուրբ աշխատանքները գտնված են Լճաշենի, Կարմիր բլուրի, Գառնիի եւ այլ վայրերի պեղումների ժամանակ: Հայտնի էին Վասպուրականի, Սյունիքի, Արցախի գորգագործության ու կարպետագործության, Դվինի, Արտաշատի, Կարինի խեցագործության ու այլ դպրոցներ: Արժաթագործության կարենոր կենտրոններ էին Վանը, Կարինը, Երզնկան, Երեւանը, Գյումրին, Ախալցխան, Շամախին ու այլ քաղաքներ: Արժաթագործության հրաշալի նմուշներ են ստեղծել Կլիկիկայի հայ վարպետները, կիրառել են ձուլման, դրվագման, ցանցվեմ, սեւադապատման, արծնակիտման եւ այլ եղանակներ: Հայտնի են Մարաշի, Այնթապի, Վասպուրականի ժանյակագործության ու ասեղնագործության դպրոցները, տարածված զարդակարերից էին շարակարը, ցողունակարը, խաչակարը եւ այլն, իսկ զարդանախշերից՝ երկրաչափական ու ծաղիկների վարդի, շուշանի, մանուշակի, զանգակի, մարգարի պատկերները:

Այլ երկրներ էլ իրենց ժողովրդական արիեստների ավանդույթներն ունեն: Ռուսաստանում լավ զարգացած էր փայտի փորագրությունը (խոխունայի դպրոց), կերամիկան (Գժել), խաղալիքների պատրաստումը (Դիմկովո, Ֆիլիմոնովո), մետաղի գեղարվեստական մշակումը (Վելիկի Ուստյուկ) եւ այլն:

Մեր օրերում էլ արիեստը շատ հարգի է: Հրաշալի քարագործ վարպետներ ունի Հայաստանը: Հայ արիեստավորների պատրաստած կենցաղային իրերը՝ պահպանակներ, գաթանախշեր, զոլալներ, դեկորատիվ սկահակներ, սկուտեղներ եւ այլն, մեծ պահանջարկ ունեն զբոսաշրջիկների շրջանում:



... Նկարում՝ ժողովրդական արիեստի նմուշներ:

Ջարուհի ՊԵՏՐՈՍՅԱՆ
Շիրակի մարզի Արթիկի հ. 3 ավագ դպրոցի ուսուցչուհի, բնագետ

Արդա ՊԵՏՐՈՍՅԱՆ
Շիրակի մարզի Արթիկի հ. 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի, բանասեր

Ցնորական Տերյանը

սկիզբը՝ էջ 7

Դեռ ավելին լինելով ետտերյանական պոեզիայի առաջնորդը, կռելով, կոփելով, դաժանագույն ու մահացու գրապայքարի մեջ բացելով նոր արվեստի ճանապարհը՝ Չարենցի աչքի առաջ միշտ Տերյանի օրինակն էր՝ որպես գրական չափանիշ: Ահա այդ «Անվերնագիր» (1933) պատառիկը.

...Սենք Տերյանից սովորեցինք երգել երգեր անորոշ, Մեր քնարը նվիրեցինք Մշուշների ու սիրո,- եվ երբ եկան որոշ օրեր, Որոշ գործեր եկան երբ,- Անվարժ հնչեց քնարը մեր եվ մնացինք առանց երգ...

Ուսուցիչը չկա այլևս,- ասում էր Չարենցը, եւ դա այն դեպքում երբ նոր ժամանակների Ուսուցիչն էլ էր ինքը, Ուսուցչապետն էլ, Սերմնացանն էլ, Հնձվորն էլ, Առաջնորդն ու Նահատակն էլ...

Կարելի է էլ ավելի խորացնել նրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունը, բայց առանց հակադրելու, որովհետեւ նրանց երկուսին էլ հավիտենական կյանք է սպասվում հայ ժողովրդի գիտակցության մեջ: Չարենցը դարի շարժումի մեջ էր՝ իր ժամանակի քաղաքական մեծ տեղաշարժերի խոր զգացողությամբ: Այստեղ ոչ միայն ԽՍՀՄ-ում ծավալված քաղաքական բռնություններն էին, այլև իսպանական դեպքերը, գերմանական ֆաշիզմը:

Այս առումով Չարենցը Տերյանի շարունակությունն էր նաև եվրոպական արվեստի նոր զարգացումների տեսադաշտում: Ֆրանցիսկո Գոյան (1746-1828) նկարչության մեջ հեռացավ առարկայական նմանություններից եւ բարդացրեց գեղանկարը: Սեւ իրականություն պատերազմի սարսափներ, իրականության անբարոյականացում եւ այս ամենը՝ գույների լեզվով: Այսպես մինչև Մալեիչի համրահայտ «Սեւ քառակուսի»-ն:

Չարենցը եւս դիմեց բարդացումների եւ գույների խտացման: Անգամ ոգեկոչեց միջնադարյան նկարիչ Հիերոնիմոս Բոսխին (1450/1466-1516)՝ ակնհայտորեն էլ ավելի խորացնելով իրականության աններդաշնակության պատկերումը: Չարենցն ստեղծեց հայոց երնիկան՝ ցեղասպանության համապատկերը («Դանթեսական առասպել», 1915-1916, «Սահվան տեսիլ», 1920, 1933): Չարենցը տեսավ, թե ինչպես է միջնադարը արշավում իսպանիայի վրա, ինչպես է ֆաշիզմը նյութում ապագա ցեղասպանությունը, ուզում եմ ասել, որ Չարենցն իր ժամանակը տեսավ նաև Պիկասոյի (1881-1973) աչքերով: Ահա 1936-ին գրած իսպանական շարքից երկու դրվագ.

Կրկին, կրկին Իսպանիա, թո դաշտերի վրա Արյան անձրեւ, արծիճ է կաթում - եվ հին քաղաքներիդ փողոցներում ահա խարույկներ են կրկին ճարձատում:

Արշավում է եւ թո, եւ աշխարհի վրա՝ Վարձկան ոհմակների գլուխն անցած՝ Հազած զարմանալի գրահ՝ Քո միջնադարյան անցյալը...

Իր հանճարով այսօր հնարել է մարդը Այնպիսի մեքենաներ, զենքեր անխոս, Որ չէր հնարի ոչ մի Լեոնարդո, Որ չէր նկարի ոչ մի Բոսխ...

Գետնից ղեկավարվող սավառնակի առջեւ, Այդ ռմբակիր ցինի - առջեւ չնչին խաղալիք է թվում այն ամենը, ինչ Հնարել է մի օր Դա-Վինչին...

Գերնիկան քաղաք էր Բասկոնիայում, ուներ 7000 բնակիչ, դեմ էր գեներալ Ֆրանկոյի բռնապետությանը, ով 1937-ին 5000 ռումբ է նետում քաղաքի վրա: Բնակչության կեսը կամ զոհվում է, կամ վիրավորվում:

Պիկասոն ստեղծում է «Գերնիկա»՝ նկարը, որ համակ մղձավանջ է, ուր կա եւ ցլամարտի տեսարան՝ սպանությամբ, եւ մարդկային մահ, եւ՝ համատարած ողբերգություն: Իսկ Չարենցն իր «Գերնիկան» տարբեր վերնագրերով արդեն ստեղծել էր:

Ժ. «Վերադարձիր, օ, վերադարձիր»

Առարկությունը գործող մի ընդհանուր սխալ մտայնության դեմ է, ինչը պիտի համատեղ ուժերով կանխենք: Անցնենք առաջ, վերադառնանք Տերյանին, անընդհատ վերադառնանք Տերյանին եւ փորձենք կամ շարունակել, կամ լրացնել:

Ձինվորները հայրենիքի՝ սահմաններն են ընդարձակում, պոետները՝ հոգու: Պոետներն այս դեպքում նախ բանաստեղծներն ու արձակագիրներն են, ապա նաև երաժիշտներն ու նկարիչները: Նրանք, երբեմն անգամ իրենց ապահովության հաշվին, իրենց իսկ կյանքի գնով առաջ են մղում քաղաքակրթության սահմանները: Եթե մի ետադարձ հայացք ուղղենք՝ բոլորը մեկ առ մեկ կկանգնեն մեր աչքի առաջ: Այդպիսին էր նաև Վահան Տերյանը, ով, իրոք ստեղծեց մի նոր գեղարվեստական իրականություն, մի նոր ցնորք, որ դարձավ կյանք: Կյանքն այն չէր, ինչ կար, բայց նրա ստեղծածը դարձավ կյանք: Նույնը չի կարելի ասել նրա կողքին ապրող հսկայի՝ Թումանյանի մասին. Թումանյանը իրական կյանքը դարձրեց գրականություն, եւ այդ գրականությունը նույնական էր իրական կյանքին:

Գիտական նվաճումների տարածքներն ակնհայտ են՝ կրակի գյուտից մինչև իրթիռ, նետաղեղից մինչև միջուկային զենք: Խոսքի մեծ ընդլայնումը համաշխարհային բնույթ ունի:

Հոգեւոր-մտավոր նվաճումների տարածքները շատ նուրբ են, երբեմն աննկատ ու աներեւոյթ: Այստեղ ոչ թե միագիծ զարգացում է, ինչպես գիտության մեջ, այլ անհատականությունների հաջորդականություն, ազգային մշակույթների առկայություն, ուր գործում է ավանդույթ, ազգային ավանդույթ հասկացությունը: Մեծագույն արժեքներն, անշուշտ, ունեն համաշխարհային նշանակություն: Կարելի է ստեղծել հոգեւոր-մտավոր նվաճումների սահմաններն արձանագրող քարտեզ՝ ազգային, համաշխարհային, ինչը, սակայն, հեշտ բան չէ:

Տերյանի գրական սահմանները, Տերյանի գրական ազդեցության շրջագիծն ակնհայտ է: Պետք է կարողանալ ամեն ինչ արձանագրել, հակառակ դեպքում մտավոր գրանցում չի ստանա: Կմնա՝ որպես բնութագիր, բայց չի արտացոլվի նվաճումների

մեջ: Իսկ դա էլ հեշտ չէ: Դե՛, գրանցե՛ք այս տողերը.

Ես տառապանքս բախտ եմ համարում եվ ծիծաղում եմ ձեր բախտի վրա...

Սա մարդն է, հերոսը, ճակատագիրը, պատմությունը, այն, որին ասում ենք ինչ, բայց Տերյանի ինչն անհնարին է առանձնացնել եւ ինչպեսից, եւ ովից:

Տերյանն ինչքան եվրոպական մշակույթի կրող էր, նույնքան, եւ ավելի, գալիս էր ազգային խորքերից, հայկականության մագնայից: Հապա մի ուշադիր հայացք նետեք հայոց ճարտարապետությանը մեր տաճարներին ու ամրոցներին, հայոց երաժշտությանը՝ թե՛ հոգեւոր, թե՛ ժողովրդական եւ վերստին թերթեք Տերյանի պոեզիան: Եվ խորքային կառուցվածքով, եւ՝ արտաքին զարդանախշով դրանք շատ նույնական են: Բառերի կրկնություն-կրկնեղբերը համեմատե՛ք շենքերի քիվերի հետ, անկյունների ու կամուրջների քարե դարձածակների հետ: Նույն կերպ Տերյանի չափածո խոսքի կառուցվածքը համեմատե՛ք հոգեւոր ու ժողովրդական երգերի կրկնաբերությունների, անցումների, զարգացումների, շրջադարձերի հետ: Ամեն ինչ նույնն է: Նույնն է նաև ոսկե հատման օրենքը, որ համամասնության գաղտնիքն է՝ համաչափության եւ ներդաշնակության պահանջով: Այդպես էին կառուցվում եկեղեցիները, այդպես էին գրվում տաղերն ու ողբերը...

Սրանք երկրի ծայրերը, գույներն ու ձեւերն են: Ոչ միայն բնության շարժվող երեւոյթներն են ծայրերի մեջ, ինչպես քամին, անձրեւը, անտառը, որտեղ ու կայծակը, գետն ու ջրվեժը, որտեղից եւ բառերի ծայրային կուտակումից առաջացած բաղաձայնային ու առձայնային, այլև լռության իրենց ծայրն ունեն հողն ու քարը, գերեզմանն ու ընդերքը: Նրանց ծայրը թրթռում լռությունն է: Տերյանն այս լռության ծայրը լսեց: Բանաստեղծություններ ունի, որոնք լուռ են դաշտում ընկած քարի մնաց, քերձից պոկված գետափի ժայռաբեկորի մնաց, չորացած ծառի մնաց: Այդ լռությունը պատյան է, որի մեջ ցաված հոգին է: Իսկ երբ այդ լռությունը ձայնարկում է՝ այսինքն, երբ հողը տնքում է երկրաշարժից առաջ, երբ հանգուցյալները շարժվում են գերեզմաններում, երբ քարը ճաքում է, իսկ ժայռաբեկորն ընկնում եւ խուլ դղրոյունով գլորվում ծորը, երբ ընդերքը հառաչում է՝ դրանք արդեն վտանգավոր ձայներ են՝ փլուզումի ու երկրաշարժի, մահվան ու հոգիների ծայրեր, որ բնությունը պահում է իր մեջ: Այդպես, ինչպես բնությունն է իր կործանարար ձայները պահում ընդերքում, նույն կերպ Տերյանն է իր ցավի ձայները խլացնում իր հոգու մեջ: Ինքը մահվան մեջ է, բայց լռեցնում է մահվան ձայնը: Ահա այսպես են ծն-

վում նրա լուռ, երբեմն՝ անգամ աննկատ մնացող ու մնացած բանաստեղծությունները:

Բառի իմաստային, հնչյունական, ձեւակառուցվածքային հնարավորություններն անսահման են, եւ դա այն աստիճանի, որ շատ լուրջը կարող է վերածվել ձեռնածոյան, ինչպես այս հանգաբանությունը՝ Յարուսլավնա- յարոս լավն ա: Տերյանը, լինելով խոսքի վարպետ, երբեք չդիմեց այսպիսի հասարակաբանության: Նույն կերպ բառը նկարչական ընկալումով կարող է բազմաթիվ հնարավորություններ ընծռել: Ասենք, կարելի է բառերով նկարել կամ դիմել բառապատկերային հեշտ, դրանով իսկ վանող խտացումների, որ վերածվում են մակդիրի: Այսպես՝ աչքերի մեջ բիբերի փոխարեն կայծակներ էին շողարծա-կում, հայացքի մեջ հրդեհի բոց էր, հոգում ու աչքերին՝ ջրհեղեղ:

Ահա Տերյանը երբեք չզնայ նաև ներդաշնակության ներքին ձեւը վնասող այսպիսի ցցուն պատկերների: Նրա համեմատության եզրերը շատ համահունչ են, իմաստով մոտիկ, որ բացվելով դառնում են համեմատություն, սեղմվելով՝ վերածվում մակդիրի: Տերյանը մնաց իր տեսիլքների ու ցնորքների բանաստեղծը բոլոր նրբերանգների մեջ: Այդ իսկ պատճառով նրա պոեզիան է ամբողջական է, եւ համամարդկային, եւ համարդակյան:

Համարդակականության գծի շարունակության մասին որպես բազմաձայնություն, որպես համանկագայնություն, խոսեցի նախորդ էջերում: Տերյանը կանխեց, Չարենցը «ոստնային մտածողությամբ» սահմանափակեց, Սեւակն արդեն գզուշացրեց, որ այս տեսության սխալ զարգացումը վնասակար է գեղարվեստի համար. այլևս կարող է լինել սինթետիկ (արհեստական) կառույց, կարող է լինել համակցված սնունդ, բայց ոչ արհեստական (քիմիական) պոեզիա, որ ոմանք ձեւակերպում են այսպես ժամանակակից բանաստեղծությունը պետք է կառուցել: Մինչդեռ կառուցում են շենքն ու երկիրը, արհեստական (քիմիական) միջոցներով ստանում են ներկեր, սոսիճ, շատ բան, իսկ պոեզիան ստեղծում են: Իր պատկերացրած հայ գրականության գալիք օրը Տերյանը այլ կերպ էր տեսնում:

Իսկ սա նշանակում է, որ Տերյանի պահանջները կենդանի են: Անկախ տարատեսակ ձեւափոխություններից՝ պոեզիան նախ կենդանի ու ապրեցնող խոսք պիտի լինի, ուղղված իրական ընթերցողին: Մինչդեռ խոսքը մեռած է, իսկ ընթերցողը՝ պայմանական: Ուրեմն իրապես «Տերյանը պահանջում է»:

Որքան կյանքը դժվարանում է, այնքան բարձրանում է պոեզիայի արժեքը: Կյանքի դժվարությունը Տերյանի համար սոցիալական չէր, այլ նախ հոգեբանական էր, հետո, հայոց ցեղասպանության հետ կապված, հայրենասիրական եւ վերջում, հեղափոխական վերափոխումներով պայմանավորված՝ հանրային:

Բայց Տերյանը, առաջին հերթին, մարդու հոգեբանական ներաշխարհի բանաստեղծն էր: Նա տեսավ նոր ժամանակների նոր մարդուն, տեսավ նրան ամենաթանկ ապրումների մեջ, որ սերն է՝ դրսևորման բոլոր ձեւերով, որ մարդկային հարաբերությունների մշակույթն է՝ առնչության բոլոր տարբերակներով, որ մարդու եւ ժամանակի նախ հոգեբանական ու բարոյական, ապա նաև հանրային ու քաղաքացիական կապն է՝ հնարավոր բոլոր դրսևորումներով: Բնական է եւ մարդը, եւ խոսքը: Այս կենսատարածքում Տերյանն ստեղծեց իր բարձրարժեք պոեզիան, որ արվեստի վերածված մեծախոսական աղոթք է:

(շարունակելի) Դավիթ ԳԱՄՂԱՐՅԱՆ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր





Փորձիր լրացնել

Տարբեր ուղրտներից

Ուղղահայաց

1. Եկեղեցական փոքր աստիճանավոր: 2. Տիեզերագնաց շուն: 3. Վահան Տերյանի դուստրը (անունը), Գետրոզ էմինի կինը: 4. Արա Գեղեցիկ արքայի հայրը: 6. Նորվեգիացի բեւեռախույզ, գիտնական, դիվանագետ, խաղաղության նոբելյան մրցանակակիր՝ Ֆրիտյոֆ...: 7. ռուս խորհրդային մանկական գրող: 8. Աշխարհի ամենախոր (1642մ.) լիճը: 9. Ֆիլմ, ֆիլմ, ֆիլմ, Վինի թուխ, մուլտֆիլմերի հեղինակ՝ Ֆեոդոր...: 12. Գանացի դիվանագետ, ՄԱԿ-ի յոթերորդ գլխավոր քարտուղար (1997-2006թթ.)՝ Քոֆի...: 13. Իսպանացի գեղանկարիչ, գրող եւ սյուրռեալիզմի հիմնադիրներից՝ Սալվադոր...: 15. Անասնաղբ, թրիք կամ...: 16. Մակերեսի չափման միավոր: 19. Գյուղ Արցախի Մարտունու շրջանում: 20. Հայ երգիչ, երգահան, կոմպոզիտոր (1953-2006թթ.): 21. Ֆրանսիացի փիլիսոփա եւ գրող Ալբեր Բամյուի պիեսներից: 23. Կղզային քաղաք Իտալիայում: 26. Ներկանյութ: 28. Միջինասիական լեռնային գյուղ: 32. Հայ փոփ եւ էստրադային երգչուհի (անունը)՝ «Եվրատեսիլ 2017»-ի Հայաստանի ներկայացուցիչ: 33. Աշխարհի ամենամեծ ավազան ունեցող գետը: 34. Ֆրանսիացի կոմպոզիտոր, երգիչ՝ Միշել...: 35. Ռուս ռեժիսոր («Մուկվան արցունքներին չի հավատում»): 38. Ամերիկյան գրականության ամենանշանավոր գրողներից... Տվեն: 39. Ֆրանսիացի դերասան եւ ռեժիսոր՝ Ռոժե...: 41. թոնրի երդիկը: 42. թվով 7-րդ նոտան սոլֆեջիոյում: 45. Ծաղկաբույս՝ նավթոս, շնդեգ, վայրի թրթուռ, կամ...: 46. թերակղզի, որ գտնվում է Եվրոպայի, Ասիայի եւ Աֆրիկայի հատման կետում: 47. Գիտական, ուսումնական, գեղարվեստության եւ այլ հիմնարկների ու ընկերությունների անվանում: 49. Քաղաք Իսրայելի հյուսիսում: Այստեղ են անցել Հիսուսի մանկությունն ու երիտասարդությունը: 52. Անգլիացի դրամատուրգ: 54. Հայ ազատագրական շարժման մեծ երախտավոր՝ Իսրայել...: 58. Ավարայրի ճակատամարտում հայոց զորքերի հրամանատարը (անունը): 59. Ածխաթթվային բուժական հանքաջուր: 60. Նշանավոր հայ բանաստեղծ (1885-1920): 61. Խորհրդային եւ ռուսական կինոռեժիսոր («Աղամանդե ձեռքը», «Օղի թորողները»): 64. Պետություն Աֆրիկայում (մայրաքաղաքը՝ Աքրա): 65. Լեռ (2322մ.) հայկական լեռնաշխարհում՝ Ծաղկանց լեռներում: 67. Համեմունքի տեսակ: 68. Ինքնաթիռի մակնիշ: 71. Խորհրդային եւ ռուսական մեքենայի մակնիշ, որի ստեղծողը Պյոտր Պրուսովն է: 72. Խորհրդային եւ վրաց շախմատիստուհի, աշխարհի 5-րդ չեմպիոնուհին (անունը): 73. Նորվեգացի մաթեմատիկոս՝ Նիլս...: 75. Իտալացի հայտնի գեղանկարիչ եւ փորագրիչ՝ Ֆրանցիսկո...:

Հորիզոնական

5. Կոնգոյի հանրապետության մայրաքաղաքը: 6. Այրարատ նահանգի 15-րդ գավառը (այժմ՝ քաղաք Ապարան): 8. Գերմանացի կոմպոզիտոր (1685-1750թթ.): 10. Սազանմանների կարգին պատկանող թռչուն: 11. Ֆիլմի կամ տեսահոլովակի մի հատված, առանձին պատկեր: 14. Հիմնական լեռների հյուսիսում ձգվող լեռնաշղթա: 15. Աշխարհում մեծությամբ 2-րդ պետությունը: 17. Ծագումով իտալացի, թատրոնի եւ կինոյի ամերիկացի հանրահայտ դերասան եւ ռեժիսոր՝... Պաչինո: 18. «ժողովրդական երգիչ» նախագծի առաջին ենթաշրջանի հաղթողը (անունը): 20. Իրանի առաջին կին ատանմաբույժ՝... Ստեֆանյան: 22. Այդպես են անվանում խիտ թփերով եւ մացառներով պատված տեղը: 24. Հայ խորհրդային երգիչ (բաս), Նար-Դոսի որդին (անունը): Դրամական միավոր Ալբանիայում: 27. Փոքր Ասիա թերակղզու արեւմտյան մասը: 29. Եվ մոլորակ եւ քիմիական տարր: 30. թռչող միջատ, այն կարող է միաժամանակ ետ ու առաջ նայել եւ համարվում է երկրագնդի ամենահին «բնակիչը»: 31. Պետություն Սկանդինավյան թերակղզում: 32. Անգլիացի կին մաթեմատիկոս՝... Լավլենյա: 34. Կղզի Վանա լճում: 36. թատերական ժանր: 37. Իրավաբան (անունը), հայտնի դերասան Ջորջ Զլուինի կինը: 40. Պեպոյի քույրը, «Պեպո» առաջին հայկական հնչյունային ֆիլմում: 41. Արեւադարձային պտուղ՝ արքայախնձոր կամ...: 43. Հայկական այբուբենի «Ը» տառի անվանումը: 44. Դրախտի չորս գետերից ճորոխ գետի նախկին անվանումը: 46. Լիճ Գեղամա լեռների մերձագագաթային սարավանդի վրա: 48. Աղելարային կսմիթային նվագաբան: 50. Երկրաչափական մարմին: 51. Ջրային փոխադրամիջոց: 53. Վերդիի օպերաներից: 55. Կենդանի, որի արյունը չեզոքացնում է օձի թույնը: 56. Ցամաքային խոշորագույն գիշատիչ կենդանիներից: 57. Քաղաք Արեւմտյան Հայաստանի Բայազետ գավառում: 58. Հայոց առաջին մայրաքաղաքը Վանա լճի ափին: 60. Հնագույն գեներիզակ, գեղարդ, կամ...: 62. կտրող գործիք: 63. Կրակի, տան, զոհաբերության հնդկական Աստված: 66. Անգույն, անհոտ, ջրում չլուծվող գազ: 67. բնական զոնա, որը ձևավորվում է

	1			2		3			4			
			5									
6		7							8	9		
10					11	12	13		14			
				15				16				
						17						
18		19			20			21		22	23	
	24									25		
26				27							28	
29										30		
				31								
	32		33							34	35	
36					37	38	39			40		
				41				42				
						43						
44		45			46			47		48	49	
	50									51		
52				53							54	
55										56		
				57								
	58		59							60	61	
62						63	64	65		66		
						67				68		
								69				
70		71				72			73		74	75
	76										77	
					78							

չոզ եւ չոր կլիմային պայմաններում: 69. Նար-Դոսի պատմվածքներից՝ «Ես եւ ...»: 70. Ուտելի պտուղ, որի հայրենիքը համարվում են Մալայան արշիպելագի կղզիները: 72. Իտալացի քիմիկոս-օրգանիկ, Նոբելյան մրցանակակիր (1963թ.)՝ Ջուլիո...: 74. Ֆրանսիացի կին գրող, «Բարե թախիծ», «Մի քիչ արեւ պաղ ջրի մեջ» վեպերի հեղինակը: 76. Ամերիկացի գրող՝ Անաիս...: 77. Ջրհեղեղից փրկված՝ նոր մարդկության նահապետը: 78. Գերմանացի անվանի ֆիզիկոս, Նոբելյան մրցանակակիր (1921թ.)՝ Ալբերտ...:

Կազմեց Վոլոդյա ՆԿՈՂՈՍՅԱՆԸ

Բաժանորդագրվի՛ր, կարդա՛ «Կրթություն»

Օվկիանոսից այն կողմ՝ հեռավոր Ամերիկայում, օվկիանոսից այս կողմ՝ Եվրոպայում, հյուսիսում՝ Ռուսաստանում, հարավում՝ արաբական երկրներում, Ավստրալիայում, թե ամենուր, յուրաքանչյուր քաղաքացի ունի իր թերթը՝ մանավանդ, եթե այն մասնագիտական է եւ ուղղված է հենց իրեն... Հայաստանում, սիրելի Ընթերցող, այդ թերթը քեզ համար «Կրթություն»-ն է՝ մեզանում պահպանված թերեւս միակ մասնագիտական թերթը, 1932 թվականից ի վեր («Կուլտուրական ֆրոնտ», «Սովետական դպրոց», «Դպրություն», «Դպրոց», 1997-ից՝ «Կրթություն» անվանումով):

Գիտե՞ս, սիրելի Ընթերցող, շատ դժվար է լինել մասնագիտական պարբերական ու միաժամանակ մնալ հանրամատչելի, հետաքրքիր լինել եւ ուսուցչի, մանկավարժի, եւ նաեւ ուսանողի, ծնողի, բոլորի համար: Դա դեռ ոչինչ. արհեստավարժ եղար՝ այդ խնդիրը կուծես: Բայց այսօր, եթե որեւէ կուսակցության, որեւէ քաղաքական կամ գործարար խմբի խոստովողը չես ու չունես այդպիսիք՝ իբրեւ հովանավոր, պիտի լուծես նաեւ տնտեսական խնդիր: Օրաթերթ չես, հրատապ լրատվություն չես հրապարակելու, «դեղին» մամուլին հետեւելով՝ ընթերցողներ որսալու սկզբունքը խոթ է քեզ համար, որովհետեւ հայոց հազարամյա դպրության ու այսօրվա դպրոցի քարոզիչն ես, ու խոսքդ պիտի լինի լուսավոր, անքեմ, դրականը դրվատող ու հասարակություն կրթող... ոչ թե նրան զավեշտով, հերյուրանքով գայթակղող:

Սիրելի Ընթերցող, ինչ նախասիրություններ էլ որ ունենաս, համոզված եղիր, «Կրթությունը» անարատ հոգեւոր սնունդ է տալու քեզ, եւ ո՛չ միայն մանկավարժական թեմաներով: Իսկ եթե ուզում ես, որ մեր հանդիպումները լինեն շարունակական եւ գոյատեւի Քո՛ թերթը՝ մի օր լավ, մի օր գերազանց, մի օր էլ պակաս կամ թերի, բայց Քո՛ թերթը, որ ամեն չորեքշաբթի հայտնվում է Քո՛ ձեռքերում, եւ որի ճակատագիրը դարձյալ Քո՛ ձեռքերում է ուղղակիորեն, բաժանորդագրվի՛ր, կարդա՛... Սիրի՛ր Քո՛ թերթը, որ այն օրավոր դառնա ավելի հետաքրքիր, փոխանցի՛ր այն Քո հարեւանին, բարեկամին, ընկերոջը, հորդորի՛ր, որ կարդա... Մեզ սնուցողը Դո՛ւ ես՝ եւ բարոյապես, եւ նյութապես: Քո՛ բաժանորդագրությամբ, կրպակներից Քո՛ գնումներով, անհրաժեշտ տպաքանակ ապահովելով՝ Դու հնարավորություն կտաս, որ «Կրթությունը» գոյատեւի, դառնա փնտրված ու սիրված թերթ... Բաժանորդագրվի՛ր, գնի՛ր, կարդա՛ «Կրթություն», միշտ ունեցի՛ր Քո թերթը...

* * *

«Կրթություն» կարելի է բաժանորդագրվել «Հայփոստի» եւ «Հայմամուլի» բոլոր տարածքային մասնաճյուղերում, բաժանորդագրություն կազմակերպող այլ գործակալություններում:

Մեկ տարվա բաժանորդագրության համար պետք է վճարել **10400** դրամ եւ ստանալ բոլոր **52** համարները:

Վեց ամսվա բաժանորդագրական գինը **5200** դրամ է (**26** համարի համար):

Երեք ամիսների բաժանորդագրության համար պետք է վճարել **2600** դրամ (համապատասխանաբար կստանաք **13** համար):

Այլ մանրամասնությունների համար կարող եք դիմել «Հայփոստի» (51-45-47), «Հայմամուլի» (45-82-00) եւ այլ գործակալությունների այն մասնաճյուղերին, որտեղ կատարում եք բաժանորդագրությունը:



Շաբաթաթերթ «Krtutun» (education) weekly «КрТУТУН» (образование) еженедельник 12.10.200

Մայրաքաղաք

Քանի՞ դար կա այս անցումների միջին... Նախիջևան-Երեւան-Իջևան... Ե՛րբ է Նոյն անցել այս ուղերթով...



«КрТУТУН» еженедельник 05.10.2005թ. չորեքշաբթի թիվ 28 (175)



«КрТУТУН» еженедельник 18.08.2005թ. հինգշաբթի թիվ 21 (11)



ՀԻՄՆԱԴԻՐ՝
ՀՀ ԿԳՄՍՆ
«Կրթություն» թերթի խմբագրություն» ՓԲԸ

Գրանցման վկայական՝ 01Ս-049349, Տրված է՝ 11.01.2001թ.
Դասիչ՝ 69312,
Հասցեն՝ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 67,
E-mail: krtutun@yandex.ru
Հեռ. (043) 57 49 56, (043) 57 49 51

Խմբագրությունը ստացված թղթակցությունները եւ նամակները չի գրախոսում եւ ետ չի վերադարձնում: Չպատվիրված հոդվածների համար հոնորար չի վճարվում:
Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը պարտադիր է:

Տպագրված է «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» հրատարակչության տպարանում: Տպաքանակը՝ 2000: Ծավալը՝ 4 տպագրական մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 14.12.2021թ. Գինը՝ 200 դրամ:

Համարի պատասխանատու՝
Գլխավոր խմբագիր՝ Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ